

ՀԻՄՆԵՐ



ԲՈՆ ՊԵՎԻՐ

Սիրելի բարեկամ,

Կը շնորհավորեմ քեզ: Բարի եկար Աստուծոյ ընտանիքէն ներս: Դուն հիմա սկսած ես կեանքիդ ամենէն նշանակալից ճամբորդութեան: Ասիկա պարզապէս սկիզբն է:

Երբ մեկը վերստին կը ծնի, անոր մէջ յառաջ եկած նոր հոգեւոր բնութիւնը կարիքը կ'ունենայ անմիջական հոգեւոր մնունդի՝ սկսիլ աճելու համար: Աստուծոյ խօսքը կը հայթայթէ այն պետք եղած մնունդը, որուն մեր ներքին անձը պետք ունի եւ զոր կը փափաքի: Կարդա՛ եւ սերտէ՛ Աստուածաշունչը. կ'առաջարկեմ, որ սկսիս Նոր Կտակարանէն: Միացիր Աստուածաշունչի սերտողութեան խումբի մը, որպէսզի Աստուծոյ խօսքը բացատրուի քեզի եւ կենդանի ըլլայ կեանքիդ մէջ:


Չոգեւոր աճը ինքնաբերաբար եղող բան մը չէ. աճիլը եւ զարգանալը դիտաւորութիւն կը պահանջեն: Կը քաջալերեմ, որ ուրիշ հաւատացեալի մը հետ բաժնեկցիս այս խանդավառիչ լուրը: Կարելոր է նաեւ, որ միանաս Աստուածաշունչին հաւատացող տեղական եկեղեցիի մը եւ կապուիս մարդոց հետ, որոնք կրնան քաջալերել քեզ նոր հաւատքիդ մէջ:

Անկեղծօրէն,


Ճոն



JohnBevere@ymail.com



ՀԻՄՆԻ



ՃՈՆ ՊԸՎԻՐ

Foundations, Western Armenian, by John P. Bevere

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as *Foundations*

Additional resources in Western Armenian are available for free download and video streaming at **MessengerX.com** and on the

MessengerX app

To contact the author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

Printed in Lebanon

Հիմեր, արեւմտահայերէն, Ճոն Պլօվիփ

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Սկսնականօրէն հրատարակուած անգլերէն լեզուով՝

Foundations վերնագիրով

Յաւելեալ աղբիւրներ արեւմտահայերէն լեզուով տրամադրելի են՝
ծրի ներբեռնման եւ հոսքային հեռարձակման համար՝ **MessengerX.com**
կայքէջին եւ **MessengerX** աշխատածրագիրին վրայ:

Հեղինակին հետ կապուելու համար գրել

JohnBevere@ymail.com հասցէին:

Այս գիրքը նուրբ է Մասսէնճըր Ինթըրնաշնընլէն եւ ԾԱԽՈՒ ՉԷ:

Տպուած՝ Լիբանանի մէջ



App Store is a trademark of Apple Inc., registered in the U.S. and other countries.

Google Play and the Google Play logo are trademarks of Google LLC.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հիմեր	5
Մեռելական Գործերէն Ապաշխարութիւն	17
Աստուծոյ Հանդէպ Հաւատք	27
Մկրտութիւններ	35
Ձեռնադրութիւն	53
Մեռելներու Յարութիւն	61
Յաւիտենական Ղատաստան	73

Հիմեր

Որեւէ կառոյցի առաջին եւ ամէնէն կարելոր մասը հիմերն են: Ճիշդ հիմերու վրայ ըլլալով, շէնք մը կրնայ հարիւրաւոր մեթր վեր բարձրանալ: Հիմն է, որ կ'որոշէ կարողականութիւնը... կամ անոր բացակայութիւնը:

Քու կեանքդ ձեռով մը Աստուծոյ շէնքն է: Դուն գլուխ գործոց մըն ես՝ ձեակերպուած Աստուծոյ ճամբաները ցուցադրելու համար աշխարհիդ (տե՛ս Եփ 2.10¹): Ատիկա ի մտի ունենալով, զարմանալի է, որ Սուրբ Գիրքերը յաճախ մեր կեանքերը կը բաղդատեն շէնքի մը կառուցման:

Միասնաբար՝ մենք Իր տունն ենք՝ կառուցանուած առաքեալներուն եւ մարգարէներուն հիմին վրայ: Իսկ անկիւնաքարը Ինքնին Քրիստոս Յիսուան է: Մենք ուշադրութեամբ իրարու միացած ենք Անոր

1 Այս թարգմանութեան մէջ Աստուածաշունչի Հին Կտակարանի մէջբերումները առնուած են՝ «Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած» տարբերակէն, 2001: Իսկ Նոր Կտակարանի մէջբերումները ընդհանրապէս առնուած են՝ «Աստուածաշունչ Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի. Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն՝ Համեմատութեամբ՝ Յունարէնի եւ Գրաբարի» տարբերակէն, Անթիլիաս, 2001, բացի եթէ բնագրի թարգմանութիւնը հարազատ պահելու համար յարմար տեսնուած է մէջբերումը ընել վերը նշուած առաջին տարբերակէն կամ «Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայական եւ Յունական Բնագիրներէն Թարգմանուած» տարբերակէն, 1981:

մէջ՝ դառնալով սուրբ տաճար մը Տիրոջ համար: (Եփեսացիներուն 2.20-21²):

Դուք Աստուծոյ շէնքն էք [...] Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով, ես մասնագէտ շինարարի մը պէս անոր հիմը դրած եմ: Հիմա ուրիշներ կը կառուցանեն անոր վրայ: Բայց ով որ կը կառուցանէ այդ հիմին վրայ՝ պէտք է շատ ուշադիր ըլլայ: (Ա.Կորնթացիներուն 3.9-10³)

Բայց դուք՝ սիրելիներս, դուք ձեզ կերտեցէք ձեր սրբագոյն հաւատքին [հիմին] վրայ [շարունակ յառաջդիմեցէք, բարձրացէք ապարանքի մը պէս աւելի եւ աւելի բարձր]: (Յուդայի 20⁴)

Առիթով մը մինչ Լիսան եւ ես կ'ընթերէինք բարեկամներու հետ իրենց տան մէջ, գետինէն առաստաղ երկարող մեծ ճեղքեր նկատեցինք պատին վրայ: Հետաքրքրութենէս մղուած, հարցուցի այդ բացայայտ ճեղքերուն մասին: Վրդոված, անոնք պատմեցին, թէ ինչպէս տան հիմերը թերի էին՝ շինարարին սխալ կրճատումներ ըրած ըլլալուն պատճառով: Դժբախտաբար դուրս եկաւ, որ սխալը սրբագրելը չափազանց ծախսալից եւ ժամանակ առնող գործընթաց մըն էր: Հոդ էր, որ աւելի գիտակցեցայ ամուր հիմերու կարեւորութեան: Հիմերը դնելը անշուշտ որ ամէնէն գրաւիչ բաժինը չէ շինարարութեան գործընթացին, բայց անիկա ամէնէն առանցքայինն է:

Իտալիոյ ծուռ աշտարակը՝ Փիզան, ամէնէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

3 Նոյնը

4 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփոյիֆայր Պայպըլ*, *Քլասիք Էփոշըն* (AMPC) տարբերակէն

նշանաւոր ճարտարարուեստական կառոյցներէն է միջնադարեան Եւրոպայի: Անոր կառուցումը սկսաւ 1173-ին եւ ձեւակերպուած էր իբրեւ զանգակի շրջանակաձեւ աշտարակ մը, որ պիտի ըլլար շուրջ 57 մետր բարձրութեամբ: Կառուցանուած սպիտակ մարմարիոնով, անիկա կը բաղկանայ ութ յարկերէ՝ ներառեալ զանգակներու սենեակը: Սակայն հակառակ անոր գեղեցիկ ռոմանական ճարտարապետութեան, պատճառը, որ զքօսաշրջիկներ հոն կը խուժեն տեսնելու այդ շէնքը՝ անոր ոչ-մտադրուած ծուռ ըլլալն է:

Ամէն օր կրնաս հանդիպիլ խումբ մը զքօսաշրջիկներու, որոնք որոշակի դիրք մը առած են նկարուելու համար. ձեռքերը դէպի վեր իբրեւ թէ իրենք բռնած են աշտարակը, որպէսզի չիյնայ: Այսօր ատիկա զուարճալի պահ մը կ'ապրեցնէ զքօսաշրջիկներուն, բայց վստահ եմ, որ շէնքին ճարտարապետները այդքան ալ պիտի չզուարճանային:

Շէնքի կառուցումը սկսելէն հինգ տարի ետք, կառուցողները ասարտած էին ութ յարկերէն երեքին շինութիւնը երբ աշտարակին հիմերը սկսած էին անհաւասար կերպով հանգչիլ կամ խրուիլ իրենց տակը գտնուող գետինին մէջ: Աշտարակը անմտօրէն կառուցանուած էր կալի, աւազի եւ պատեաններու խառնուրդի մը վրայ: Իբրեւ արդիւնք, աշտարակը բացայայտօրէն ծռեցաւ: Չկարենալով ապահովաբար շարունակել շինարարութիւնը, աշխատանքը դադրեցաւ շուրջ մէկ դար: Շինարարական աշխատանքները վերջաւորութեան վերսկսան եւ ասարտեցան 1372-ին: Ժամանակի ընթացքին, ընդարձակ վերակառուցողական աշխատանքներէ ետք, երկրաչափները կրցան կայունացնել աշտարակը,

բայց անոր թեքութիւնը բնաւ պիտի չչտկուի:

Բացայայտ է, որ առանց ամուր հիմերու, ոչ մէկ շէնք կրնայ ուղիղ մնալ: Միայն ժամանակի հարց է ճեղքերուն եւ թեքութիւններուն յայտնուիլը: Նոյնն է պարագան Քրիստոսով մեր կեանքին:

ՅԻՍՈՒՍ՝ ՄԵՐ ՀԻՄԸ

Հիմնաքար մը կը դնեմ Երուսաղէմի մէջ, ամուր եւ փորձուած քար մը: Անիկա թանկագին անկիւնաքար մըն է, որուն վրայ կառուցանելը ապահով է: Ան որ կը հաւատայ, բնաւ պիտի չսասանի: (Եսայիի 28.16⁵)

Այն հիմը, որուն մասին կը խօսի Եսայի Ինքնին Յիսուս Քրիստոսն է: Ինչպէս տեսանք, հիմին որակը ճակատագրական է շէնքին կամ կառոյցին կայունութեան եւ դիմացկունութեան համար: Այն հիմնաքարը, որուն մասին Եսայիի միջոցաւ խօսեցաւ Տէրը՝ փորձուած քար մըն է: Բան մը փորձել կը նշանակէ՝ միջոցներ ի գործ դնել ստուգելու համար բանի մը որակը եւ վստահելիութիւնը, յատկապէս նախքան որ անիկա գործածութեան դրուի: Որեւէ բան, որ չէ փորձուած՝ վստահելի չէ:

Ամէն տարի ես բազմահազար մղոններ կը ճամբորդեմ: Ամբողջական վստահութիւն ունիմ երբ կը բարձրանամ օդանաւ, քանի որ գիտեմ, որ նախքան որ օդանաւը գործածութեան մէջ դրուի, խիստ եւ սպառիչ փորձարկումներու կ'ենթարկուի: Օդանաւի ձեւակերպումին առաջին հանգրուաններէն ի վեր այդ փորձարկումները ի

5 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

գործ կը դրուէին՝ ապահովելու համար օդանաւին որակը, կատարումը եւ վստահելիութիւնը՝ ճամբորդները ապահովաբար որեւէ որոշեալ վայր հասցնելու համար:

Յիսուս փորձարկուեցաւ բոլոր կէտերուն մէջ եւ երբեք չձախողեցաւ: Երբայեցիներուն նամակը գրողը կը մատնանշէ, թէ՛ «Աստուած՝ որուն համար եւ որուն միջոցաւ ամէն բան շինուած է, ընտրեց շատ մը զաւակներ փառքի արժանացնել: Եւ միայն ճիշդ պիտի ըլլար, որ Յիսուսը՝ Իր չարչարանքներուն միջոցաւ, կատարեալ առաջնորդ մը ընէր՝ յարմար զանոնք իրենց փրկութեան առաջնորդելու համար» (2.10⁶): Ատոր համար է, որ Յիսուս ոչ միայն թանկարժէք է, այլեւ ապահով հիմ մը, որուն վրայ կարելի է կառուցանել:

Ակնարկելով Յիսուսի, Պետրոս Առաքեալ հաստատեց Եսայիի մարգարէութիւնը, որ կ'ըսէ. «Դուք կու գաք Քրիստոսի, որ կենդանի անկինաքարն է Աստուծոյ տաճարին [...] Եւ դուք այն կենդանի քարերն էք, որոնցմով Աստուած կը կառուցանէ Իր հոգեւոր տաճարը [...] Ինչպէս Սուրբ Գիրքերը կ'ըսեն. “Անկինաքար մը կը դնեն Երուսաղէմի մէջ՝ ընտրուած մեծ պատիւի համար, եւ որեւէ մէկը, որ կը վստահի Անոր՝ երբեք ամօթով պիտի չմնայ”» (Ա.Պետրոսի 2.4-6⁷): Պօղոս Առաքեալ թէ՛ Եսայիի եւ թէ՛ Պետրոսի համամիտ էր: Ան գրեց. «Քանի որ ոչ ոք կրնայ որեւէ հիմ դնել բացի անկէ, որ արդէն ունինք. Յիսուս Քրիստոսը» (Ա.Կորնթացիներուն 3.11⁸):

Յիսուս է մեր հաստատ հիմը:

Հիմա որ նկատի առինք, թէ Սուրբ Գիրքերը՝ թէ՛

6 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

7 Նոյնը

8 Նոյնը

Հին եւ թէ Նոր Կտակարաններուն մէջ, ինչ կ'ըսեն Յիսուսի մասին՝ իբրեւ մեր հիմը, եկէք տեսնենք, թէ Յիսուս Ինք ինչ ըսաւ: Մատթէոսի Աւետարանի տասնվեցերորդ գլուխին մէջ կը կարդանք, թէ Յիսուս կ'երթայ Փիլիպպէի Կեսարիա շրջանը եւ հոն Իր աշակերտներուն կը հարցնէ. «Մարդիկ ինչ կ'ըսեն Մարդու Որդիին մասին. ո՞վ եմ ես» (հմր 13):

Կարգ մը աշակերտներ արագ պատասխան տուին: Ընդհանուր պատասխանը հետեւեալն էր. «Ոմանք քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք՝ Եղիա մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը» (հմր 14): Բազմութեան կարծիքներ բաժնեկցելէն ետք, Յիսուս անոնց նայեցաւ եւ ուղղակիօրէն հարցուց. «Իսկ դ՞ուք ով կը կարծէք զիս» (հմր 15):

Վստահ եմ, որ այդ հարցումը խոցեց անոնց սիրտերը, եւ վստահ չէին ինչպէս պատասխանեն անոր: Ուրիշներուն ըսածները կամ կարծիքները անմիջապէս բաժնեկցող այդ մարդիկը հիմա լուռ էին: Այդ իրականութեան դէմ յանդիման գտնուելով, անդրադարձան, որ պատասխան չունէին ինչպէս նաեւ որ կեդրոնացած էին ուրիշներու խորհուրդներուն եւ կարծիքներուն վրայ, փոխանակ իրենց սիրտին մէջ հաստատած ըլլալու, թէ ո՞վ էր Յիսուս:

Սիմոն, զոր Յիսուս վերանուանեց՝ Պետրոս, միակն էր աշակերտներէն, որ սրտագին պատասխան մը տուաւ: Ան համարձակօրէն հռչակեց. «Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին» (հմր 16): Ժպիտով եւ փայլող աչքերով, Յիսուս պատասխանեց. «Երանի՛ քեզի [...] որովհետեւ ատիկա քեզի յայտնողը մարդ մը չէր, այլ իմ Հայրս, որ երկինքի մէջ է» (հմր 17): Ուրիշ թարգմանութիւն մը կ'ըսէ. «Հայրը գերբնականօրէն յայտնեց քեզի ատիկա» («Տը Փաշըն Թրանսլէյշըն»- TPT):

Պետրոսի յայտնութեան աղբիւրը հնքնին Աստուած էր, ոչ թէ մարդու մը կարծիքը: Այդ գիտութիւնը կամ գաղափարը իրեն եկաւ ուղղակի յայտնութեամբ: Այդ ըսել ուզեց Յիսուս երբ ըսաւ. «Միակ ձեւը, որով մարդիկ ինծի կու գան Հօր միջոցաւ է, որ զիս ղրկեց. Ան է, որ անոնց սիրտին վրայ կը դնէ, որ զիս ընդունին [...] Մարգարէներուն կողմէ գրուած է, թէ՛ “Բոլորին ալ Աստուած պիտի սորվեցնէ”»: Եթէ իրապէս Հօրը մտիկ կ'ընես եւ ուղղակի Իրմէ կը սորվիս, Ինծի պիտի գաս» (Յովհաննէսի 6.44-45⁹):

Ուստի յստակօրէն կը տեսնենք, թէ Յիսուսի լուսատու ճշմարտութիւնը պէտք է ամրապնդուի մեր սիրտերուն մէջ. «Եւ իմ ո՛վ ըլլալուս ճշմարտութիւնը պիտի ըլլայ այն հիմնաքարը, որուն վրայ պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս՝ իմ օրէնսդրական ժողովս, եւ մահուան զօրութիւնը պիտի չկարենայ յաղթել անոր» (Մատթէոսի 16.18¹⁰): Յիսուսի յայտնութիւնը այն հիմն է, որուն վրայ պիտի կանգնի եկեղեցին: Եթէ այդ ճշմարտութիւնը ամբօրէն չհաստատուի մեր մէջ, մենք դիւրութեամբ կրնանք շեղիլ հանրային կարծիքի փոփոխական ալիքներով:

Առիթով մը Յիսուս բաժնեկցեցաւ որոշ ճշմարտութիւններ, որոնք շփոթի մատնեցին եւ գայթակղեցուցին Իր հետետորդները, ինչ որ պատճառ եղաւ, որ շատեր լքեն զինք: Մնացողներուն՝ որոնց մէջ կար նաեւ Պետրոսը, Յիսուս հարցուց. «Միթէ դո՛ւք ալ կ'ուզէք երթալ» (Յհ 6.67): Յայտնութեան գիտութեամբ լեցուած՝ Պետրոս պատասխանեց. «Տէ՛ր, որո՞ն պիտի երթանք. յաւիտենական կեանք տուող խօսքերը դո՛ւն ունիս: Մենք հաւատացինք ու գիտցանք թէ

9 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Փաշըն Թրանսլէյշըն* (TPT) տարբերակէն

10 Նոյնը

դրու ես Քրիստոսը, Աստուծոյ Սուրբը» (հմր 68-69):

Պետրոս օրինակն է այն կայունութեան, որ կու գայ յայտնութեան գիտութենէն: Երբ մարդիկ լքեցին Յիսուսը, Պետրոս մնաց: Ան համոզուած էր, որ Յիսուս Աստուծոյ Որդին էր. հետեւաբար անդրդուելի էր: Ան հիմնուած էր ժայռին վրայ. յայտնութեան ժայռին:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԺԱՅՌ ՄԸՆ Է

Ուրեմն ամէն ով որ կը լսէ Իմ այս խօսքերս եւ կը գործադրէ զանոնք, կ'ըլլայ այն իմաստուն մարդուն պէս, որ ժայռի վրայ կառուցանեց իր տունը: Անձրեւ եկաւ, հեղեղ եղաւ, հովը փչեց եւ զարկաւ տանը, բայց անհկա չկործանեցաւ, քանի որ ժայռի վրայ հիմնուած էր: Եւ ամէն ով որ կը լսէ Իմ այս խօսքերս եւ չի կատարեր զանոնք կ'ըլլայ այն անմիտ մարդուն պէս, որ իր տունը շինեց աւազի վրայ: Անձրեւ եկաւ, հեղեղ եղաւ, հովը փչեց ու զարկաւ տանը, եւ անհկա կործանեցաւ, ու մեծ էր անոր կործանումը (Մատթէոսի 7.24-27¹¹):

Աստուծոյ խօսքին վրայ հիմնուած կեանք մը կը նմանի հաստատուն գետինի վրայ կառուցանուած տան մը. անհկա կառուցանուած է մնալու կամ դիմանալու համար: Թէ՛ իմաստուն մարդը եւ թէ՛ անմիտ մարդը լսեցին Տիրոջ ուսուցումը, բայց տարբերութիւնը յառաջ բերողը իմաստուն մարդուն հնազանդութիւնն էր իր լսած խօսքին: Նոյնպէս ալ երբ մենք մեր կեանքը կը կերտենք Աստուծոյ խօսքին հնազանդութեամբ, ատիկա կայունութիւն կ'երաշխաւորէ:

11 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Ինկլիշ Սթանդըրդ Վըրժըն* (ESV) տարբերակէն

Յակոբոս Առաքեալ կ'արձագանգէ Յիսուսը՝ մեզի յիշեցնելով Աստուծոյ Խօսքը թէ՛ լսելու եւ թէ՛ անոր հնազանդելու կարեւորութիւնը, երբ կ'ըսէ. «Բայց միայն մի՛ լսէք Աստուծոյ Խօսքը: Պէտք է ընէք անոր ըսածը: Այլապէս միայն դուք ձեզ կը խաբէք: Որովհետեւ եթէ լսէք Խօսքը եւ չհնազանդիք, ատիկա կը նմանի հայելիին մէջ դուք ձեր դէմքին նայելուն: Դուն քեզ կը տեսնես, կը հեռանաս հայելիէն եւ կը մոռնաս տեսքդ» (1.22-24¹²):

Յակոբոս Աստուծոյ Խօսքը կը նմանցնէ հայելիի մը: Բնական հայելիին նպատակը մեր արտաքին վիճակը բացայայտելն է. մինչ Աստուծոյ Խօսքի հայելին կը բացայայտէ մեր ներքին վիճակը: Անիկա կը բացայայտէ մեր մասին բաներ, զորս ոչ մէկ բնական հայելի կրնայ: Ի մտի ունեցիր, որ հայելին միայն կ'օգնէ մեզի երբ քայլ կ'առնենք մեր տեսած բանին վերաբերեալ: Օրինակի համար, եթէ հայելիին մէջ տեսնես, որ մազդ կանոնաւոր չէ կամ կերակուրի կտորներ կան ակռաներուդ միջեւ, քու բնական հակազդեցութիւնդ պիտի ըլլայ շտկել մազդ կամ մաքրել ակռաներդ:

Նոյնը ճիշդ է նաեւ Աստուծոյ Խօսքի հայելիին պարագային: Խօսքը կը յանդիմանէ եւ կը սրբագրէ՝ մեզ արդար կեանքի մը մէջ ուղղելու համար: Պօղոս գրեց. «[...] Բոլոր Սուրբ գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար. որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ, ամէն տեսակի բարի գործերու պատրաստ» (Բ. Տիմոթէոսի 3.16-17): Նոյնպէս ալ Եբրայեցիներուն նամակը գրողը կ'ըսէ.

12 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

«Որովհետեւ Աստուծոյ խօսքը կենդանի է եւ ազդու, աւելի հատու՝ քան որեւէ երկասայրի սուր, եւ կը թափանցէ մարդուս շունչին ու հոգիին մէջ, մինչեւ ողն ու ծուծը, եւ կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները» (4.12):

Բարեկամ, կ'ուզեմ շեշտել հետեւեալը, որովհետեւ չափազանց կարեւոր է. Աստուծոյ խօսքը օգտակար կ'ըլլայ մի'այն եթէ հնազանդօրէն ընդառաջենք անոր: Ասիկա կը նշանակէ, թէ պէտք է ընենք պէտք եղած պատշաճեցումները եւ մեր կեանքերը համապատասխանեցնենք Աստուծոյ ձեւերուն: Մինչ մեր սիրտերը կը սկսին հաստատուիլ Յիսուսի յայտնութեան վրայ, կրնանք շարունակել կերտել Անոր հիմին վրայ՝ հնազանդութեան միջոցաւ:

Շինարարները կը հետեւին յատուկ յատակագիծի մը՝ գծուած երկրաչափներու կողմէ՝ սկսեալ հիմերու հանգրուանէն: Նոյնպէս ալ Աստուած՝ Գերագոյն Շինարարը, ունի յատուկ յատակագիծ մը եւ շինութեան ծրագիր մը մեր կեանքերուն համար, զորս կարելի է գտնել սերտելով Իր խօսքը եւ յանձնուելով Իր Հոգիին:

Աստուծոյ խօսքի հիմնական ճշմարտութիւնները, որոնց վրայ պէտք է կառուցանենք մեր կեանքերը պարզուած են Եբրայեցիներուն Գիրքին մէջ եւ հաստատուած ամբողջ Նոր Կտակարանին մէջ: Վեցերորդ գլուխին մէջ կը կարդանք.

Ուստի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ գանք չափահասներու յատուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ մեռելական գործերէն ապաշխարելուն եւ Աստուծոյ հաւատալուն, քրիստոնէական դաստիարակութեամբ

մկրտուելուն, ձեռնադրութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական դատաստանին: Այլ, Աստուծոյ թոյլտուութեամբ, կ'անցնինք չափահասներու յատուկ ուսուցումներուն: (Եբրայեցիներուն 6.1-3)

Վեց հիմնական սկզբունքները, որոնց վրայ պէտք է կառուցանենք հետեւեալներն են.

1. Մեռելական գործերէն ապաշխարել
2. Աստուծոյ հաւատալ
3. Մկրտուիլ
4. Ձեռնադրութիւն
5. Մեռելներու յարութիւն
6. Յաւիտենական դատաստան

Ամէն հաւատացեալ պէտք է հաստատուած ըլլայ այդ հիմնական ճշմարտութիւններէն իւրաքանչիւրին վրայ, որպէսզի աճի եւ հասուննայ Քրիստոսով: Առանց այդ հիմնական ճշմարտութիւններուն կառուցանելը կը նմանի առանց նախակրթարանի մէջ ուսուցանուող հիմնական միջոցներուն՝ ինչպէս կարդալու եւ գրելու կարողութիւնը, ուսման մէջ յառաջանալ փորձելուն:

Դժբախտաբար շատերս անտեսած ենք այդ տարրական ճշմարտութիւնները, որուն իբրեւ հետեւանք թերաճ մնացած ենք հոգեւոր աճման մէջ եւ ամէնէն վտանգաւորը՝ խոցելի դարձած ենք սխալներու պատճառով մեր ճամբէն շեղելու: Հիմնական վարդապետութեան այդ ներշնչեալ նախագիծը՝ եթէ անոր հետեւինք տրուած շարքով, կը ներկայացնէ մեղաւորի մը սկսնական մուտքը Քրիստոնէական կեանք (ապաշխարութիւն) եւ կը յառաջանայ մինչեւ յարութիւն եւ վերջին դատաստան:

Այս գիրքի ամբողջ ընթացքին պիտի քննարկենք

այդ հիմնական ճշմարտություններէն իւրաքանչիւրը, որպէսզի աճինք Քրիստոսի լիութեան մէջ:

Եկէք իմաստուն կերպով կառուցանենք:



ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ինչն է շէնքի մը կառուցման ամէնէն կարեւոր հանգրուանը եւ ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ համար Յիսուսը իբրեւ քու հիմն տեսնելդ շատ կարեւոր է հոգեւոր աճմանդ համար:
3. Մատթէոսի 7.24-27-ին մէջ Յիսուս կը խօսի իմաստուն մարդուն եւ յիմար մարդուն մասին: Ինչն էր իմաստուն մարդուն եւ յիմար մարդուն տարբերութիւնը: Ինչո՞ւ կարեւոր է ատիկա:

Մեռելական Գործերէն Ապաշխարութիւն

Ուստի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ զանք չափահասներու յարուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ մեռելական գործերէն ապաշխարելուն [...]: (Եբրայեցիներուն 6.1)

Ըստ Եբրայեցիներուն նամակը գրողին, մեռելական գործերէն ապաշխարելը առաջին հիմն է, որուն վրայ կառուցանուած է եկեղեցին: Ապաշխարութիւնը կը հարթէ եւ կը հաւասարցնէ մեր սիրտին գետինը, որպէսզի մեզ պատրաստէ Աստուծոյ ծրագիրին կամ յատակագիծին համաձայն կառուցանելու: Չկայ ճշմարիտ կամ մնայուն հաւատք Աստուծոյ հանդէպ առանց ապաշխարութեան:

Շատ շփոթ կայ «ապաշխարութիւն» բառին շուրջ, ուստի եկէք սկսինք՝ զանիկա սահմանելով: Նոր Կտակարանին մէջ «ապաշխարութիւն» գոյականը (*մեթանոյա*) եւ «ապաշխարել» բայը (*մեթանոէօ*) կը գտնուին առաջինը 24 իսկ երկրորդը 34 անգամ: Ամէնէն տարածուած եւ ընդունուած սահմանումը

«միտքի փոփոխություն»ն է: Սակայն եթե կանգ առնենք այդ հիմնական սահմանումին վրայ, մեզմէ կը վրիպի աւելի մեծ բան մը:

Պէյքըր Էնսայքլոփիդիա աֆ փը Պայպըը կ'ըսէ, թէ ապաշխարութիւնը «բառացիօրէն միտքի փոփոխություն մը[ն է] ոչ թէ անհատական ծրագիրներու, մտադրութիւններու կամ համոզումներու, այլ՝ *ամբողջ անհատականութեան* մէջ փոփոխություն մը[ն է]՝ մեղաւոր ընթացքէ մը դէպի Աստուած» (շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Նկատի առ «ամբողջ անհատականութեան» եզրը: Այդ բառերը գործածելով, ուսումնասիրողները ցոյց կու տան, թէ ապաշխարութիւնը սոսկ միտքի փոփոխութենէ մը աւելին է: *Տի Լեկզըմ Թիոլոճիքը Ուրբոպոքը* աւելի եւս կ'ընդարձակէ այդ գաղափարը, նշելով, թէ ապաշխարութիւնը՝ «գործընթաց մը[ն է], որուն մէջ անհատը կը վերաուղղէ իր միտքը եւ կամքը մեղքէն հեռու՝ դէպի Աստուած»:

Ապաշխարութիւնը կը վերաբերի միտքին, կամքին եւ զգացումներուն՝ թափանցելով մեր սիրտին խորերը, որպէսզի հաստատօրէն համոզուինք մեր էութեան կորիզին մէջ: Ճշմարիտ ապաշխարութիւն տեղի կ'ունենայ երբ կ'անդրադառնանք մեր մեղաւոր վիճակին: Այդ յայտնութիւնը բնականաբար պիտի փոխէ մեր անձերը եւ զԱստուած տեսնելու մեր ձեւը, եւ անիկա նաեւ պէտք է փոխէ մեր ապրելու ձեւը: Ապաշխարութեան ճամբով մենք կը հրաժարինք ինքնակառավարումէ՝ բացարձակապէս ենթարկուելով Աստուծոյ:



Ամբողջ Նոր Կտակարանին մէջ Յիսուսի հետ մեր յարաբերութիւնը կը նմանցուի ամուսնութեան

մը: Եկեղեցին Հարսն է, իսկ Յիսուս՝ Փեսան: Եւ ոեւէ լաւ ամուսինի մը պէս, Յիսուս մեր ամբողջական նուիրումը եւ հաւատարմութիւնը կ'ուզէ:

Նկատի առ հետեւեալ *սենարիոն*: Գիշեր մը Ճասթին գործէն տուն կը վերադառնայ եւ կը տեսնէ, որ կինը՝ Էնճըլան, շպարուած էր եւ գեղեցիկ հագուստ մը կը հագնէր: Ան կ'եզրակացնէ, թէ կինը յատուկ երեկոյ մը ծրագրած է իրենց համար եւ կը հարցնէ եթէ կ'ուզէր, որ ինքն ալ պաշտօնական հագուստ հագնէր եւ պատրաստուէր: Էնճըլան՝ քիչ մը շուարած, կը պատասխանէ. «Օ՛, հոգիս, այս գիշեր Թոնիին հետ դուրս պիտի ելլեմ: Ընթրիքի պիտի երթանք, յետոյ շարժապատկեր եւ ապա պանդոկի մը մէջ պիտի գիշերենք այսօր: Վաղը առաւօտեան ուշ ժամերուն պէտք է վերադարձած ըլլամ»:

«Թոնին ղվ է», զայրացած կը հարցնէ Ճասթին:

«Երկրորդական վարժարանի օրերու սիրականս», կը պատասխան Էնճըլա:

«Ինչ... Չեն կրնար անոր հետ դուրս ելլել»:

«Ինչո՞ւ ոչ»:

«Որովհետեւ մենք ամուսնացած ենք. նուիրուած ենք իրարու: Ուրիշներու հետ դուրս չենք ելլեր», կը բացագանչէ Ճասթին, հաստատելով այն ինչ որ կ'ենթադրէր, որ բացայայտ էր:

«Մէկ վայրկեան, հոգիս», կը պատասխանէ Էնճըլան: «Դուն իմ նախասիրածս ես: Քեզ կը սիրեմ իմ անցեալի սիրականներէս աւելի, բայց չես կրնար ակնկալել, որ այլեւս անոնց հետ չտեսնուիմ: Ես անոնցմէ ոմանց հետ շատ մօտիկ եղած եմ տարիներ, տակաւին կը սիրեմ զիրենք եւ կ'ուզեմ իրենց հետ հաճելի ժամանակ անցընել: Ինչ կայ ատոր մէջ»:

Ըստ երեւոյթին, այս *սենարիոն* ծիծաղելի է: Դժուար է պատկերացնել, որ մէկը չի հասկնար,

թէ ամուսնութիւն կը նշանակէ՝ բացարձակ յարաբերութիւն մը: Վստահաբար ոչ մէկս պիտի ամուսնանայինք Էնճըլայի նման մէկու մը հետ, որ կ'ակնկալէր ամուսնութենէն ետք տակաւին շարունակել տեսնուիլ նախկին սիրականներուն հետ: Եւ սակայն այդպէս է, որ շատ մը Քրիստոնեաներ կը վարուին Յիսուսի հետ իրենց յարաբերութեան մէջ: Երբ չենք խօսիր Յիսուսի տիրութեան եւ մեր կեանքի հին ձեւերէն ապաշխարելու կարելորութեան մասին, կ'ունենանք հարս մը, որ շնացող մըն է. հարս մը, որ չի հասկնար իրարու նուիրուած ըլլալով մտերմութեան գեղեցկութիւնը:

Երբ մենք անկեղծօրէն կ'ապաշխարենք, կը հրաժարինք մեր ձեւերով եւ պայմաններով կեանքը ապրելէն եւ կ'ունենանք Աստուծոյ իշխանութեան հանդէպ ամբողջական ենթակայութեան եւ հնազանդութեան կեցուածքը: Հիմնականին մէջ կը հոչակենք՝ «Ես այլեւս իրենք զիրենք Աստուծոյ Խօսքէն եւ իմաստութենէն վեր դասող խորհուրդներ, համոզումներ, պատճառաբանութիւններ կամ առարկութիւններ պիտի չընդունիմ»:

Չկայ Աստուծոյ դառնալ առանց ապաշխարութեան: Իրականութեան մէջ չենք կրնար մեր հաւատքը Յիսուս Քրիստոսի վրայ դնել առանց նախ ապաշխարելու Աստուծոյ հանդէպ մեր գիտցած անհնազանդութիւններէն: Ապաշխարութեան անհրաժեշտութիւնը շեշտուած է ամբողջ Նոր Կտակարանին մէջ: Ապաշխարութիւնը բնաւ ընտրողական չէ. անիկա նախապայմանն է մեր կեանքերուն մէջ Աստուծոյ շնորհքի գործունէութեան: Ասոր համար է, որ ապաշխարութեան կոչը վերջաւորութեան շնորհքի պարգեւ մըն է: Պարգեւ մը, որ կ'ազատագրէ մեզ մեր անձերուն պզտիկութենէն, որպէսզի ապրինք Աստուծոյ լիութեան մէջ:

Սակայն շատ յաճախ ապաշխարութիւնը սխալ կը մեկնաբանուի, եւ մարդիկ կը քաշուին այդ բառը գործածելէ:

Եկէք նկատի առնենք, թէ Պօղոս եւ Պետրոս առաքեալները ինչպէս ներկայացուցին ւսետարանը.

Ես երբեք չքաշուեցայ ձեզի ըսելէ այն ինչ որ պէտք ունէիք լսելու՝ թէ՛ հրապարակաւ եւ թէ՛ ձեր տուներուն մէջ: Ես մէկ պատգամ փոխանցած եմ թէ՛ հրեաներուն եւ թէ՛ յոյներուն. *անհրաժեշտութիւնը* մեղքէն *ապաշխարելու* եւ Աստուծոյ դառնալու, ինչպէս նաեւ Տէր Յիսուսի հանդէպ հաւատք ունենալու: (Գործերը 20.20-21¹³, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ես հնազանդեցայ երկինքէն եկած տեսիլքին: Նախ քարոզեցի Դամասկոսի մէջ եղողներուն եւ ապա Երուսաղէմի եւ ամբողջ Յուդայի մէջ, ինչպէս նաեւ հեթանոսներուն, թէ՛ *բոլորը պէտք է ապաշխարեն իրենց մեղքերէն* եւ դառնան Աստուծոյ, ինչպէս նաեւ իրենց ըրած բարի գործերով փաստեն, որ իրենք փոխուած են: (Գործերը 26.19-20¹⁴, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Անցեալին Աստուած շրջանցեց այդ բաներուն մասին մարդոց տգիտութիւնը, բայց հիմա Ան կը պատուիրէ բոլոր մարդոց ամէն տեղ, որ *ապաշխարեն իրենց մեղքերէն* եւ Իրեն դառնան: (Գործերը 17.30¹⁵, շեշտադրումը՝ մեր կողմէ)

13 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

14 Նոյնը

15 Նոյնը

Պենտեկոստի Օրը առաջին բանը, որ Պետրոս ըսաւ ջերմեռանդօրէն Աստուծոյ կամքը փնտռողներուն կը վերաբերէր անոնց ինչպէս կարենալ փրկուելուն: Ան համարձակօրէն հռչակեց.

Ձեր ընթացքը փոխեցէք եւ իրաքանչիւրդ մկրտուեցէք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի ձեր մեղքերը ներուին: (Գործերը 2.38)

Որեւէ ուսուցում, որ չի պարունակեր ապաշխարութեան կոչ սխալ առաջնորդութիւն կու տայ մեղաւորներուն եւ սխալ կերպով կը ներկայացնէ զԱստուած. գրեթէ ինչ որ տեսանք Էնճըլայի պատմութեան մէջ: Աւետարանը հաղորդելու ներկայի ձեւը Աստուծոյ կամքը փնտռողները նախ հաւատալու առաջնորդելն է, անոնց ապաշխարութեան աղօթք ընելը եւ ապա վերջաւորութեան անոնց մեղքէն ապաշխարելու մասին խօսիլը, որ կրնայ պատահիլ շաբաթներ, ամիսներ կամ նոյնիսկ տարիներ ետք: Բայց արդեօք այդ ռազմավարութիւնը աստուածաշնչակամն է:



Սուրբ Հոգին է, որ մարդոց ցոյց կու տայ փրկութեան կարիքը: Յիսուս ըսաւ. «Եւ երբ Ան գայ, պիտի կշտամբէ աշխարհը իր մեղքին համար, Աստուծոյ արդարութեան եւ գալիք դատաստանին: Աշխարհի մեղքը այն է, որ կը մերժէ հաւատալ Ինձի: Արդարութիւնը մատչելի է, որովհետեւ ես Հօրը քով կ'երթամ, եւ զԻս այլեւս պիտի չտեսնէք: Դատաստան պիտի գայ, որովհետեւ այս աշխարհի իշխանը արդէն իսկ դատուած է» (Յովհաննէսի 16.8-11¹⁶):

16 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն Նիու Լիվինկ Թրանսլէյշըն (NLT) տարբերակէն

Սուրբ Հոգիի կշտամբանքին նկատմամբ մեր պատասխանը կամ կեցուածքը կ'որոշէ մեր Աստուծոյ դառնալը կամ չդառնալը: Նկատի առէք հետեւեալ երկու տարբեր պատասխանները կամ կեցուածքները Սուրբ Հոգիի կշտամբանքին նկատմամբ: Առաջինը կը տեսնենք Պենտեկոստէի օրը Պետրոսի կողմէ՝ Աւետարանը բաժնեկցելէն ետք. «Այս խօսքերը լսելով, ներկաները *խորապէս ցնցուեցան* եւ հարցուցին Պետրոսի եւ միւս առաքեալներուն. «Ի՞նչ պէտք է ընենք, որ կողմնենք?»» (Գործերը 2.37, շեշտադրումը՝ մեր կողմէ): Հիմա այդ պատասխանը բաղդատեցէք Աւետարանը բաժնեկցելէն ետք Ստեփանոսի ստացած պատասխանին հետ. «Այս խօսքերը լսելով, ներկաները ներքնապէս զայրացան եւ սկսան իրենց ակռաները կրճտել անոր դէմ» (Գործերը 7.54):

Կշտամբանքը յառաջ պիտի բերէ կամ ապաշխարութիւն (առաջին օրինակը) կամ կարծրացած սիրտ մը (երկրորդ օրինակը): Եթէ ապաշխարութիւն ըլլայ արդիւնքը, անձը ինքզինք դրած կ'ըլլայ Աստուծոյ գոյքը եւ շնորհքը ստանալու դիրքին մէջ՝ մինչ Աստուծոյ քաղցրութիւնը կ'առաջնորդէ զինք ապաշխարութեան ((Տես Հռոմայեցիներուն 2.4): Անոնք, որոնք «Ի՞նչ պէտք է ընենք» պատասխանեցին, իրենք զիրենք դրին թէ Աւետարանը լսելու (որուն մէջ կար նաեւ ապաշխարութիւն) եւ թէ փրկութիւնը ընդունելու դիրքին մէջ:

Պօղոս յաւելեալ ակնարկ մը կու տայ ապաշխարութեան գեղեցկութեան վերաբերեալ.

Արդարեւ Աստուծոյ ուզած տրտմութիւնը կը պատճառէ ապաշխարութիւն՝ փրկութեան *համար*, որ չի զղջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը կը պատճառէ մահ: Քանի դուք տրտմեցաք Աստուծոյ ուզած ձեռով, ահա՛

այդ բանը ձեր մէջ ինչ փոթաջանութիւն գոյացուց, *ինչ անձի* մաքրութիւն նոյնիսկ *ինչ* ջատագովութիւն, *ինչ* ընդվզում, *ինչ* վախ, *ինչ* տենչանք, *ինչ* նախանձախնդրութիւն, *ինչ* վրէժխնդրութիւն. *ամէն կերպով* դուք ձեզի հաւանութիւն տուիք, թէ այդ խնդիրին մէջ անկեղծ էք: (Բ. Կորնթացիներուն 7.10-11¹⁷, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Պօղոս յստակօրէն կը մատնանշէ, թէ Աստուծոյ ուզած տրտմութիւնը բնութեան փոփոխութիւն կը յառաջացնէ. փոփոխութիւն մը, որ կը յատկանշուի փոթաջանութեամբ, ջատագովութեամբ, ընդվզումով, վախով, տենչանքով, նախանձախնդրութեամբ եւ վրէժխնդրութեամբ: Ուստի կը տեսնենք, որ կշտամբանքը յառաջ կը բերէ Աստուծոյ ուզած տըրտմութիւնը, եւ ճիշդ ձեւով ընդունուելու պարագային, այդ տրտմութիւնը պատճառ պիտի ըլլայ անկեղծ ապաշխարութեան, որ կը հասցնէ փրկութեան:

Եթէ Յիսուս, Յովհաննէս Մկրտիչ եւ աշակերտները Բարի Լուրը հոշակեցին ապաշխարութեան կոչի ընկերակցութեամբ, պէտք չէ մենք ալ նոյնը ընենք:



Ապաշխարութիւնը միայն մեղքէն հեռանալու ընտրութիւն մը չէ, այլեւ Աստուծոյ դառնալու ընտրութիւն մը: Ատիկա պատահելու համար, պէտք է Յիսուսին տաս կեանքիդ տիրութիւնը: Յիսուսը իբրեւ «Տէր» ընդունիլ կը նշանակէ կեանքիդ ամբողջ սեփականութիւնը Իրեն տալ: Այն պահուն, որ ատիկա ընես, Աստուած կ'ազատագրէ քեզ

17 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

խաւարի թագաւորութենէն եւ կը փոխադրէ քեզ Իր Թագաւորութեան լոյսին եւ փառքին մէջ:

Եթէ կ'ուզես Յիսուս Քրիստոսով փրկութիւնը ընդունիլ, հետեւեալ աղօթքը ըրէ.

Երկինքի մէջ գտնուող Աստուած, կ'ընդունիմ, որ ես մեղաւոր մըն եմ եւ Քու արդար չափանիշիդ դիմաց թերի եմ: Իմ մեղքիս պատճառով արժանի եմ յաւիտենական դատաստանիդ: Շնորհակալ եմ զիս այս վիճակին մէջ չձգելուդ համար, որովհետեւ կը հաւատամ, որ Դուն ղրկեցիր Յիսուս Քրիստոսը՝ Քու միածին Որդիդ, որ ծնաւ կոյս Մարիամէն, որպէսզի մեռնի ինձի համար եւ իմ դատաստանս խաչը հանէ: Կը հաւատամ, որ Ան երրորդ օրը յարութիւն առաւ եւ ներկայիս նստած է Քու աջիդ՝ իբրեւ իմ Տէրս եւ Փրկիչս: Ուստի այսօր ես կ'ապաշխարեմ Քեզմէ անկախ կեանք մը ապրելէս, եւ կեանքս ամբողջութեամբ կը յանձնեմ Յիսուսի Տիրութեան:

Յիսուս, Քեզ կը դաւանիմ իբրեւ իմ Տէրս եւ Փրկիչս: Եկուր կեանքէս ներս Քու Հոգիովդ եւ փոխէ զիս ու դարձուր Աստուծոյ զաւակ մը: Ես կը մերժեմ խաւարի բաները, որոնց կառչած էի անցեալին, եւ այս օրուրնէ սկսեալ այլեւս պիտի չապրիմ իմ անձիս համար, այլ՝ Քու շնորհքովդ պիտի ապրիմ Քեզի համար:

Շնորհակալ եմ, Տէր: Հիմա կեանքս ամբողջութեամբ Քու ձեռքերուդ մէջն է, եւ Քու Խօսքիդ համաձայն, ես բնաւ ամօթով պիտի չմնամ: Յիսուսի անունով: Ամէն:

Կը շնորհաւորեմ: Բարի եկար Աստուծոյ

ընտանիքէն ներս: Կը քաջալերեմ, որ քու այս խանդավառիչ լուրդ բաժնեկցիս ուրիշ հաւատացեալի մը հետ: Նաեւ կարելոր է, որ միանաս Աստուածաշունչին հաւատացող տեղական եկեղեցիի մը եւ կապուիս ուրիշներու հետ, որոնք կրնան քաջալերել քեզ քու նոր հաւատքիդ մէջ:

Ասիկա սկիզբն է կեանքիդ ամէնէն նշանակալից ճամբորդութեան: Թող ամէն օր աճիս յայտնութեան, շնորհքի եւ Աստուծոյ հետ բարեկամութեան մէջ:



ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ինչո՞ւ համար անհրաժեշտ է ապաշխարելը:
2. Ի՞նչն է, որ ապաշխարութիւն կը յառաջացնէ, եւ ի՞նչ պէտք է ըլլայ մեր պատասխանը:
3. Ի՞նչ է արդիւնքը Աստուծոյ ուզած տրտմութեան:
4. Երբ կ'ապաշխարես, ի՞նչ բանէ կը դառնաս եւ դէպի ո՞ր կը դառնաս:

Աստուծոյ Հանդէպ Հաւատք

Ուստի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ գանք չափահասներու յարուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ մեռելական գործերէ ապաշխարելուն եւ Աստուծոյ հաւատալուն: (Եբրայեցիներուն 6.1)

Ի վերջոյ, ամետարանը այն Բարի Լուրն է, թէ՛ ինչպէս Աստուած Յիսուս Քրիստոսի միջոցաւ մարդկութիւնը փրկեց եւ հաշտեցուց Իրեն հետ: Այդ պատճառով ամետարանին վերաբերեալ Պօղոս կ'ըսէ.

Որովհետեւ ես չեմ ամչնար Քրիստոսի մասին Բարի Լուրէն: Անիկա Աստուծոյ գործող զօրութիւնն է, որ կը փրկէ բոլոր անոնք, որոնք կը հաւատան. նախ հրեան ինչպէս նաեւ հեթանոսը: Այդ Բարի Լուրը մեզի կ'ըսէ, թէ Աստուած ինչպէս կը շտկէ մեր դիրքը Իրեն հանդէպ: Ատիկա սկիզբէն վերջ հաւատքով է, որ կ'իրագործուի: Ինչպէս Սուրբ Գիրքերը կ'ըսեն. «Հաւատքով

է, որ արդար մարդը կեանք կ'ունենայ»:
(Հռոմայեցիներուն 1.16-17¹⁸)

Աւետարանը կը յայտնաբերէ մեղքէն եւ անոր հետեւանքներէն փրկուելու ձեւը: Յիսուսի ըրածին Բարի Լուրին հանդէպ հաւատքը մեր կեանքերուն մէջ կ'արձակէ Աստուծոյ փրկող զօրութիւնը: Աւետարանի իրական պատգամը, ինչպէս նշուած է Աստուածաշունչին մէջ, կը բաղկանայ որոշակի իրականութիւններէ: Պօղոս աղուոր ամփոփում մը կու տայ աւետարանի հիմնական իրականութիւններուն վերաբերեալ.

Եղբայրներ, կ'ուզեմ ձեզի յիշեցնել այն Աւետարանը, որ իմ քարոզութեամբս ընդունեցիք եւ որուն հաւատարիմ կը մնաք: Այդ Աւետարանով ալ կը փրկուիք, եթէ զայն պահէք այնպէս՝ ինչպէս ես ձեզի քարոզեցի. այլապէս զուր տեղ հաւատացած կ'ըլլաք: Ես ձեզի փոխանցեցի այն հաւատքը, որ նախ էն ընդունեցի. այն՝ որ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, ինչպէս Սուրբ գիրքերը կ'ըսէին, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ Սուրբ գիրքերուն համաձայն: (Ա. Կորնթացիներուն 15.1-4)

Աւետարանի հիմնական իրականութիւններն են.

1. Յիսուս Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ (քաւութիւն):
2. Յիսուս Քրիստոս երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ (յարութիւն):
3. Եթէ հաւատանք Յիսուսի մահուան եւ յարութեան, Աստուծոյ հետ կը հաշտուինք

18 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Եւ Իր պատկերով կը փոխակերպուինք (արդարութիւն):

Փրկութիւնը հիմնուած է Յիսուսի մահուան եւ յարութեան վրայ: Չկայ բան մը, որ կրնանք ընել փրկուելու եւ Աստուծոյ հետ հաշտուելու համար բացի մեզ Աստուծոյ հետ հաշտեցնելու համար Յիսուսի կատարած փրկագործութեան հաւատալէն: Նկատի առ, թէ ինչ գրեց Պօղոս Յիսուսի կատարուած գործին մասին.

Որովհետեւ Աստուած մեզի համար մեղքի պատարագ ըրաւ Քրիստոսը, ան՝ որ բնաւ մեղք չէր գործած, որպէսզի մենք անոր միանալով արդարանանք Աստուծոյ համար: (Բ.Կորնթացիներուն 5.21)

Մենք Աստուծոյ հետ կը հաշտուինք Յիսուս Քրիստոսի հաւատալով: Եւ ատիկա կը պատահի ամէն մարդու հետ, ո՛վ որ ալ ըլլանք: Քանի որ ամէն մարդ մեղք գործած է. բոլորս ալ թերի ենք Աստուծոյ փառաւոր չափանիշին դիմաց: Եւ սակայն Աստուած՝ Իր շնորհքով, ձրիաբար կը շտկէ մեր դիրքը Իրեն հանդէպ: Ան ատիկա ըրաւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ՝ ազատելով մեզ մեր մեղքերուն պատիժէն: Մենք Աստուծոյ հետ կը հաշտուինք երբ կը հաւատանք, որ Յիսուս Իր կեանքը զոհեց, որպէսզի մենք կեանք գտնենք: (Հռոմայեցիներուն 3.22-25¹⁹)

Աստուած ձեզ փրկեց Իր շնորհքով երբ հաւատացիք: Եւ չէք կրնար ատիկա ձեր որեւէ մէկ ըրածին վերագրել. անիկա նուէր

19 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

մըն է Աստուծմէ: Փրկութիւնը մրցանակ մը չէ մեր ըրած լաւ բաներուն համար, որպէսզի ոեւէ մէկս չոխտրտանք անով: (Եփեսացիներուն 2.8-9²⁰)

Հաստատելով Պօղոսի բոլոր ըսածները, Յովհաննէս Առաքեալ գրեց.

Որովհետեւ այս ձեւով է, որ Աստուած սիրեց աշխարհը. Ան տուաւ Իր միածին Որդին, որպէսզի բոլոր անոնք, որոնք հաւատան Անոր՝ չկորսուին, այլ՝ յաւիտենական կեանքը ունենան: (Յովհաննէսի 3.16²¹)

Հաւատքը անձնական կեցուածք մըն է Աւետարանին նկատմամբ: Անիկա մեզի համար Յիսուսի կատարածը միտքով ընդունիլ չէ միայն. անիկա նաեւ սրտով հաւատալ է: Երբ կը լսենք ավետարանը, անիկա պէտք է հաւատքով ընդունինք. «Հետեւաբար բնաւ չենք դադրիր Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելէ անոր համար, որ երբ մեզմէ Իր պատգամը լսեցիք, մեր ըսածները սոսկ մարդկային գաղափարներ չհամարեցիք: Դուք մեր ըսածը ընդունեցիք իբրեւ Ինքնին Աստուծոյ Խօսքը՝ ինչ որ իրապէս է: Եւ այդ Խօսքը կը շարունակէ գործել անոնց մէջ, որոնք կը հաւատան» (Ա.Թեսաղոնիկեցիներուն 2.13²²): Հաւատքը գործի կը լծէ զօրութիւնը Աստուծոյ Խօսքին, որ նաեւ ընթացքի մէջ կը դնէ վերածնունդի փորձառութիւնը:

Պօղոս կը բացատրէ, թէ փրկութիւնը կու գայ ավետարանի ճշմարտութիւնը սրտով հաւատալէն եւ բերանով դաւանելէն. «Եթէ բացէ ի բաց հոշակես, թէ

20 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

21 Նոյնը

22 Նոյնը

Յիսուս Տէր է եւ սիրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած մեռելներէն յարուցանեց զայն՝ կը փրկուիս: Սիրտիդ մէջ հաւատալով է, որ Աստուծոյ հետ կը հաշտուիս, եւ հաւատքդ բաց է ի բաց հոչակելով է, որ կը փրկուիս» (Հռոմայեցիներուն 10.9-10²³):

Քրիստոսի հանդէպ հաւատքը առանց ազդեցութեան չէ: Հաւատքի միջոցաւ ներքին փոխակերպում մը տեղի կ'ունենայ: Կը դառնանք.

Նոր Աստեղծագործութիւններ- «Ոեւէ մէկը, որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ» (Բ.Կորնթացիներուն 5.17): «Ոչ մէկը՝ որ Աստուծմէ ծնած է, մեղք կը գործէ [դիտումնաւոր կերպով, գիտնալով եւ իբրեւ սովորութիւն], որովհետեւ Աստուծոյ բնութիւնը կը բնակի անոր մէջ [Անոր կեանքի սկզբունքը՝ աստուածային սերմը, մնայուն կերպով անոր մէջ կը մնայ]. եւ ան չի կրնար վարժութիւն ընել մեղք գործելը, որովհետեւ Աստուծմէ ծնած է: Ասով յստակ կ'ըլլայ, թէ որոնք իրենց բնութիւնը առած են Աստուծմէ եւ Իր զաւակներն են եւ որոնք իրենց բնութիւնը առած են չարախօսէն եւ անոր զաւակներն են. ոչ ոք, որ արդարութիւն չի գործեր [որ Աստուծոյ կամքին չի համակերպիր՝ իր նպատակին, մտածումներուն եւ գործերուն մէջ] Աստուծմէ է. ոչ ալ Աստուծմէ է ան, որ չի սիրեր իր եղբայրը (իւր հաւատակիցը Քրիստոսով)» (Ա.Յովհաննէսի 3.9-10²⁴): «Այն առեւն մաքուր

23 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

24 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփրիֆայր Պայպըլ, Քլասիք Էփրիշըն* (AMPC) տարբերակէն

ջուր պիտի սրսկեմ ձեր վրայ, եւ դուք մաքուր պիտի ըլլաք: Ձեր աղտոտութիւնը պիտի լուացուի, եւ դուք այլեւս կուռքեր պիտի չպաշտէք: Եւ ես ձեզի պիտի տամ նոր սիրտ եւ ձեր մէջ նոր հոգի մը պիտի դնեմ: Պիտի հանեմ ձեր քարացած, յամառ սիրտը եւ պիտի տամ կակուղ, ինծի ընդառաջող սիրտ մը: Եւ Իմ Հոգիս պիտի դնեմ ձեր մէջ, որպէսզի հետեւիք իմ հրամաններուս (վճիռներուս) եւ զգոյշ ըլլաք գործադրելու Իմ կանոններս» (Եզեկիէլի 36.25-27²⁵):

Իմաստուն, Արդար, Սրբագործուած, Փրկուած, Կնքուած եւ Սուրբ Հոգիով Բնակուած- «Իրմով դուք նաեւ՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատացիք Իրեն, կնքուեցաք խոստացուած Սուրբ Հոգիով, որ երաշխիքն է մեր ժառանգութեան մինչեւ որ տիրանանք անոր՝ Իր փառքին գովաբանութեան համար» (Եփեսացիներուն 1.13-14²⁶): «Բայց դուք Քրիստոս Յիսուսով անկէ՛ էք, որ Աստուծմէ մեզի համար իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ ազատագրութիւն եղաւ» (Ա. Կորնթացիներուն 1.30²⁷):



«Իսկ առանց հաւատքի անկարելի է Աստուծոյ հաճութիւնը շահիլ: Արդարեւ,

25 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

26 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Ինկլիշ Սթանդըրտ Վըրժըն* (ESV) տարբերակէն

27 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Աստուծոյ մօտեցողը պէտք է հաւատայ՝ թէ ան գոյութիւն ունի եւ կը վարձարդէ անոնք, որ զինք կը փնտրեն»: (Եբրայեցիներուն 11.6)

Հաւատքը ներքին համոզում մըն է, թէ՛ Աստուած գոյութիւն ունի եւ կարելի է զԱյն ճանչնալ անձնական փորձառութեամբ: Անիկա ժամանակաւորին եւ յաւիտենականին միջեւ կապն է:

Բացի երբ Աստուած Իր գերիշխանութեամբ միջամտէ, Ստեղծիչիդ հետ կապուիլը, փրկութիւն գտնելը եւ ուխտին արդարութիւնը ընդունիլը հաւատքով կ'ըլլայ: Հաւատքը մեզի կ'արտօնէ, որ հասնինք Յիսուս Քրիստոսի մեզի համար ամբողջ իրագործածին: Ատոր մէջ կայ նաեւ ունենալ Աստուծոյ շնորհքը, որ կը լիազօրէ կամ կարող կը դարձնէ մեզ, որ մեր կեանքը կերտենք Իր զօրութեամբ եւ իմաստութեամբ, ոչ թէ մեր:

Ուստի ապաշխարութեան եւ հաւատքի մասին Սուրբ Գիրքերուն յստակօրէն ըսածը քննարկելէ ետք, կրնանք եզրակացնել, թէ առանց ապաշխարութեան եւ հաւատքի, չենք կրնար հաշտուիլ Աստուծոյ հետ: Պօղոս մեզ կը քաջալերէ, ըսելով. «Շարունակեցէք յառաջանալ հաւատքի մէջ՝ վստահ ըլլալով, որ հաստատուն հիմք վրայ կ'աճիք: Յոյսը այն աւետարանին, որուն հաւատացիք թող բնաւ չմարի ձեր մէջ: Եւ ասիկա է այն փառաւոր լուրը, որ կը քարոզեմ ամբողջ աշխարհի շուրջը» (Կողոսացիներուն 1.23²⁸): Մինչ կ'աճինք հաւատքի մէջ՝ աճելով աւետարանի հիմին վրայ, զԱստուած հաճեցնող կեանք մը յառաջ կու գայ, որովհետեւ առանց հաւատքի անկարելի է հաճեցնել զԱստուած:

28 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Փաշըն Թրանսլէյշըն* (TPT) տարբերակէն



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ի՞նչ են ատտարանի հիմնական իրականությունները, եւ ի՞նչ կը նշանակէ հաւատք ունենալ ատտարանին վրայ:
2. Ըստ Հռոմայեցիներուն 10.9-10-ին, փրկութիւնը ի՞նչպէս յառաջ կու գայ:
3. Ի՞նչ որոշակի փոփոխութիւններ գործի կը լծէ հաւատքը ներքնապէս:

Մկրտութիւններ

Ուարի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ գանք չափահասներու յատուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ [...] մկրտուելուն [...]: (Եբրայեցիներուն 6.1-2)

Նախորդ դասին մէջ խօսեցանք անոր մասին, թէ ինչպէս հաւատքը մեզ կը հասցնէ փրկութեան հայթայթած բոլոր բաներուն: Ատիկա կը ներառէ Աստուծոյ ընտանիքին պատկանելու եւ Անոր Թագաւորութեան անդամ դառնալու առանձնաշնորհումը: Յաջորդ հիմնական սկզբունքը, զոր պիտի քննարկենք մկրտութիւններու գաղափարն է:

Վերոնշեալ համարին մէջ (անգլերէն տարբերակին պարագային- *Թարգմանիչ*) մկրտութիւն բառը գործածուած է յոգնակիով («մկրտութիւններուն»): Հետեւաբար կրնանք եզրակացնել, թէ Եբրայեցիներուն նամակը գրողը կ'ակնարկէ մէկէ աւելի տեսակի մկրտութիւններու:

Մինչ կը սերտենք տարբեր տեսակի մկրտութիւնները, կարելի է նկատի ունենալ, թէ «մկրտութիւն» բառը կու գայ յունարէն «պափթիզո» բառէն, որ կը նշանակէ՝ «մխրճել, սուզել/ընկղմել,

յագեցնել, ողողել/հեղեղել»։ Մկրտութեան մասնակցիլը թէ՛ *ամբողջական* եւ թէ՛ *անցումային* փորձառութիւն մըն է. *ամբողջական* այն իմաստով, որ անիկա կը վերաբերի ամբողջ անձին եւ *անցումային* այն իմաստով, որ անիկա կը նշէ մէկ տեղէ կամ հանգրուանէ ուրիշի մը անցնիլը։

Ամբողջ Նոր Կտակարանին մէջ նշուած են հինգ տարբեր տեսակի մկրտութիւններ.

Յովհաննէս Մկրտիչի Մկրտութիւնը- Ասիկա ապաշխարութեան մկրտութիւն մըն է. «Յովհաննէս կը մկրտէր անապատին մէջ եւ կը քարոզէր ապաշխարութեան մկրտութիւնը՝ մեղքերու ներումին համար» (Մարկոսի 1.4²⁹): Ատիկա Նոր Ուխտի մկրտութեան պարզապէս նախապատկերացումը չէր, այլ՝ սկիզբն էր Նոր Ուխտի մկրտութեան. «Որովհետեւ բոլոր Մարգարէներն ու Օրէնքը մարգարէացան մինչեւ Յովհաննէսը» (Մատթէոսի 11.13³⁰): Յովհաննէս Մկրտիչի պատգամը կը համարուի՝ «Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անտարանին սկիզբը» (Մարկոսի 1.1³¹):

Ապաշխարութիւնը մարդու մը ամբողջ էութեան փոխանցումն է՝ մեղքէն արդարութեան. փոխանցում մը՝ ինքնակառավարումէ Աստուծոյ ամբողջական ենթակայութեան։

Մկրտութիւն Քրիստոսի Մարմինին մէջ- Այն պահուն, որ Յիսուս Քրիստոսը իբրեւ քու Տէրդ ընդունեցիր, Իրեն հետ մէկ եղար. մարմինը եւ գլուխը մէկ են։ «Որովհետեւ մենք բոլորս՝ Հրեայ թէ հեթանոս, ծառայ թէ ազատ, նոյն Հոգիով մկրտուեցանք՝ մէկ մարմին կազմելու համար, եւ

29 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

30 Նոյնը

31 Նոյնը

ամէնքս ալ նոյն Հոգիէն խմեցինք [...] Արդ, դուք թէպէտ առանձին-առանձին անդամներ էք, բայց միասնաբար կը կազմէք Քրիստոսի մարմինը» (Ա. Կորնթացիներուն 12.13,27):

Հետեւաբար Քրիստոսի Մարմինին մէջ մկրտութիւնը ամբողջական փոխանցում մըն է խաւարի թագաւորութենէն եւ ամբողջական մխրճում մը Աստուծոյ լոյսի թագաւորութեան մէջ. «Քանի որ Ան փրկած է մեզ խաւարի թագաւորութենէն եւ փոխադրած դէպի Թագաւորութիւնը Իր սիրելի Որդիին, որ գնեց մեր ազատութիւնը եւ ներեց մեր մեղքերը» (Կողոսացիներուն 1.13-14³²):

Այս մկրտութիւնը պատկանելիութեան մկրտութիւն մըն է: Քանի որ հիմա արդէն կը պատկանիս Աստուծոյ ընտանիքին, բաժին ունիս ընտանիքի օգուտներուն կամ օրհնութիւններուն մէջ, որոնք կը պարունակեն՝

Որդեգրութիւն՝ իբրեւ որդի կամ դուստր Աստուծոյ ընտանիքին մէջ- «Աստուած սկիզբէն որոշեց մեզ որդեգրել իր սեփական ընտանիքին մէջ՝ մեզ իրեն բերելով Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Ան ատիկա ուզեց ընել, եւ ատիկա մեծ հաճոյք պատճառեց Իրեն» (Եփեսացիներուն 1.5³³):

Քաղաքացիութիւն՝ Աստուծոյ երկնաւոր թագաւորութեան մէջ- «Հետեւաբար այլեւս Աստուծոյ համար օտար եւ խորթ չէք, այլ՝ Աստուծոյ ժողովուրդին հետ համաքաղաքացի էք եւ Աստուծոյ ընտանիքին հարազատ անդամները» (Եփեսացիներուն 2.19):

32 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

33 Նոյնը

Բժշկություն եւ Մատակարարություն- Խաչին վրայ Յիսուսի կատարած փրկագործությունը կը ներառէ՝ բժշկություն եւ մատակարարություն. ոչ միայն մեղքերու ներում: Եսայի մարգարէացաւ. «Բայց անիկա մեր յանցանքներուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ճզմուեցաւ: Մեզի խաղաղութիւն տուող պատիժը անոր վրայ եղաւ, եւ իր վէրքերով մենք բուժուեցանք» (Եսայիի 53.5): Պետրոս հաստատեց, թէ՛ «Ան անձնապէս մեր մեղքերը իր մարմինին վրայ կրեց խաչին վրայ, որպէսզի մենք մեռնինք մեղքին եւ ապրինք ճիշդին համար: Անոր վէրքերով դուք բժշկուած էք» (Ա. Պետրոսի 2.24³⁴):

Ամէն Տեսակ Օրհնութիւններ- «Օրհնեալ է Աստուծ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն տեսակ հոգեւոր օրհնութեամբ» (Եփեսացիներուն 1.3):

Յաւիտենական Ժառանգութիւն- «Առաւել, որովհետեւ մենք միացանք Քրիստոսի, ստացանք ժառանգութիւն մը Աստուծմէ, որովհետեւ Ան ընտրեց մեզ սկիզբէն եւ այնպէս կ'ընէ, որ ամէն բան Իր ծրագիրին համաձայն գործէ» (Եփեսացիներուն 1.11³⁵):

Ջուրի Մկրտութիւն- Քրիստոսի մէջ մկրտուիլը այն մկրտութիւնն է, զոր հաւատացեալներ սկսնականօրէն կը ճանչնան իբրեւ Յիսուսի մահուան եւ յարութեան հաղորդակից ըլլալ:

34 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

35 Նոյնը

Երբ հաւատացեալ մը ջուրի մէջ կը մկրտուի, ան հանրային եւ արտաքին հոշակումը կ'ընէ սիրտի ներքին փոխակերպումի մը, որ նախ տեղի ունեցած է ապաշխարութեամբ եւ Յիսուս Քրիստոսի քաւչական գործին հանդէպ հաւատքով: Ջուրի մկրտութիւնը յայտարարել է, թէ մենք ոչ միայն կը հրաժարինք մեղքէն, այլեւ կը մեռնինք անոր: Կը հոշակենք, թէ մեր հին կեանքը եւ մեղանշական բնութիւնը այդ պահէն ի վեր մեռած են: Միւս կողմէ մենք նաեւ կը հոշակենք, թէ յարութիւն առած ենք՝ Քրիստոսով նոր կեանքի մը համար: Մկրտութեան ջուրին մէջ իջնելը կը խորհրդանշէ Քրիստոսի հետ խաչուիլը եւ թաղուիլը: Ջուրէն ելլելը կը խորհրդանշէ Քրիստոսի հետ յարութիւն առնելը: Հետեւաբար ջուրի մկրտութիւնը կը ներկայացնէ Յիսուսի մահուան եւ յարութեան զօրութիւնը: Այդ մկրտութեան նշանակութեան վերաբերեալ Պօղոս գրեց.

Կամ արդեօք մոռցմք, որ երբ մկրտութիւնով Քրիստոս Յիսուսի միացանք, Իր մահուան մէջ ալ Իրեն միացանք: Որովհետեւ մկրտութեամբ՝ մեռանք եւ թաղուեցանք Քրիստոսի հետ: Եւ ճիշդ ինչպէս Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ՝ Հօրը փառաւոր զօրութեամբ, այժմ մենք ալ կրնանք նոր կեանք մը ապրիլ: (Հռոմայեցիներուն 6.3-4³⁶)

Երբ Քրիստոսի եկաք՝ «թլփատուեցաք», բայց ոչ թէ ֆիզիքապէս: Քրիստոս հոգեւոր թլփատութիւն մը ըրաւ՝ ձեր մեղաւոր բնութիւնը կտրել-թափելով: Որովհետեւ դուք թաղուեցաք Քրիստոսի հետ երբ

36 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

մկրտուեցաք: Եւ Իրեն հետ յարութիւն առիք՝ նոր կեանքի մը համար, որովհետեւ վստահեցաք Աստուծոյ հզօր զօրութեան, որ Քրիստոսը յարուցանեց մեռելներէն: (Կողոսացիներուն 2.11-12³⁷)

Եւ մկրտութիւնը, որ պատկեր մըն է [...] ձեզ նաեւ կը փրկէ [ներքին հարցապնդումներէ եւ վախերէ]՝ ոչ թէ արտաքին մարմինի աղտոտութիւնը վերցնելով [[ոգանքով], այլ՝ [ձեզի տալով] բարի եւ մաքուր խղճմտանքի լուծումը [ներքին մաքրութիւն եւ խաղաղութիւն] Աստուծոյ առջեւ [որովհետեւ դուք կը ցուցադրէք այն ինչ որ կը հաւատաք, որ ձերն է] Յիսուս Քրիստոսի յարութեան միջոցաւ: (Ա. Պետրոսի 3.21³⁸)

Ջուրի մկրտութիւնը Յիսուսի պատկանելի ետք մեր առաջին առիթներէն մէկն է զինք պատուելու եւ Իրեն հնազանդելու: Նախքան որ անձ մը ջուրի մէջ մկրտուի, կան որոշ պայմաններ, զորս պէտք է լրացուին: Այդ պայմանները կ'ընդգրկեն հետեւեալ քայլերը.

Ապաշխարել- Պենտեկոստէի օրը, Պետրոս համարձակօրէն յայտարարեց. «Ապաշխարեցէք, ու ձեզմէ իւրաքանչիւրը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու ներումին համար, եւ պիտի ստանաք Սուրբ Հոգիին պարգեւը» (Գործերը 2.38³⁹): Ապաշխարութիւնը պէտք

37 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն Նիու Լիվինկ Թրանսլէյշըն (NLT) տարբերակէն

38 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփոխֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէ

39 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

է գայ մկրտութենէն առաջ. քանի որ անիկա առաջին պատասխանը կամ կեցուածքն է, զոր Աստուած կ'ակնկալէ ռեւէ անձէ, որ կը փափաքի փրկուիլ:

Հաւատալ- Ինչպէս տեսանք նախորդ գլուխին մէջ, աւետարանին հանդէպ հաւատք կը պահանջուի՝ գործի լծելու համար անոր փրկող զօրութիւնը: Յիսուս ըսաւ. «Գացէք ամբողջ աշխարհը եւ բոլոր մարդոց քարոզեցէք Աւետարանը: Ով որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի, իսկ ով որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի» (Մարկոսի 16.15-16): Աւետարանը կը հռչակուի ամէն տեղ, եւ փրկուիլ փափաքողներէն կը պահանջուի, որ ապաշխարեն, հաւատան եւ մկրտուին:

Որոշել- Հաւատացեալը ինք պէտք է որոշումը տայ մկրտուելու. ուրիշներ իր փոխարէն չեն կրնար տալ այդ որոշումը: Ապաշխարելու եւ հաւատալու պահանջները ցոյց կու տան, թէ այդ որոշումը տուողը գիտակից է իր առած քայլին: Ատիկա ընելով, անձը բացայայտօրէն կը յայտարարէ, թէ մեռած է իր հին կեանքին եւ հանրութեան առջեւ կը հաստատէ, թէ իր կեանքը տուած է Յիսուսին եւ յանձն կ'առնէ ապրիլ Անոր շնորհքով:

Ուստի ջուրի մկրտութիւնը ամբողջական մխրճում մըն է Քրիստոսի մէջ՝ հրապարակաւ յայտարարելով մահը մեր հին կեանքի ձեւին եւ նուիրում Աստուծոյ կեանքի ձեւին. «Հին անձս խաչուած է Քրիստոսի հետ: Այլեւս ես չեմ, որ կ'ապրիմ, այլ՝ Քրիստոս կ'ապրի իմ մէջս: Ուստի կ'ապրիմ այս հողեղէն մարմինին մէջ՝ վստահելով Աստուծոյ Որդիին, որ սիրեց զիս եւ Ինքզինք ինձի

համար տուաւ» (Գաղատացիներուն 2.20⁴⁰):

Սուրբ Հոգիի Մկրտութիւն- Ասիկա ջորի մկրտութենէն անջատ փորձառութիւն մըն է, ուր հաւատացեալը կը լեցուի Սուրբ Հոգիով՝ որ կը լիագորէ կամ կը զօրացնէ զինք Յիսուսը ազդու կերպով ներկայացնելու համար: Սուրբ Հոգիի մկրտութիւնը ունենալը առաջարկ մը, ընտրութիւն մը կամ յանձնարարութիւն մը չէ. անիկա պատուէր մըն է:

Յիսուս յստակօրէն պատուիրեց.

Եւ առիթով մը, երբ անոնց հետ միասին հաց կ'ուտէր, անոնց պատուիրեց. «Երուսաղէմէն մի՛ հեռանաք, սպասեցէք՝ մինչեւ ստանաք Հօրը խոստումը, որուն մասին խօսեցայ ձեզի: Յովհաննէս ջորով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք մօտ ատենէն»: (Գործերը 1.4-5)

Յիսուս նաեւ բացայայտեց նպատակը այդ մկրտութեան, ըսելով.

Եւ ահա ես ձեզի պիտի դրկեմ Հօրս տուած խոստումը: Մնացէք Երուսաղէմի մէջ, մինչեւ երկինքէն զօրութիւն ստանաք: (Ղուկասի 24.49)

Բայց երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը: (Գործերը 1.8)

Սուրբ Հոգիի մկրտութեամբ կը ստանանք զօրութիւն՝ ապրելու այս նոր կեանքը, զոր

40 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Յիսուս մատչելի դարձուցած է մեզի համար: Աստուծմէ եկած այդ զօրութեամբ օժտուած՝ ազատ կ'արձակուինք մեղքի իշխանութենէն եւ կը զինուինք Սուրբ Հոգիի գերբնական պարգեւներով (կարդա՛ւ Ա.Կորնթացիներուն 12): Աստուած կը փափաքի, որ բոլոր հաւատացեալները լեցուին Իր Հոգիով: Պետրոս ըսաւ. «Որովհետեւ խոստումը ձեզի համար է, նաեւ ձեր զաւակներուն, ու բոլոր հեռու եղողներուն, զորս Տէրը՝ մեր Աստուածը պիտի կանչէ» (Գործերը 2.39⁴¹):



Ես Յիսուս Քրիստոսը իբրեւ Փրկիչ ճանչցայ եղբօր մը կողմէ երբ Փերտիւ Համալսարանի ուսանող էի 1979-ին: Երբ հրաժարեցայ կեանքը ապրելու իմ ձեւէս եւ Յիսուս Քրիստոսը իբրեւ իմ Տէրս դաւանեցայ, գիտցայ, որ Աստուծոյ Թագաւորութեան մէջ ծնայ: Կասկած չունէի, որ փրկուած էի: Սակայն կեանքիս մէջ բան մը կը պակսէր, եւ քանի մը ամիս չէի կրնար հասկնալ, թէ ինչ էր աստիկա: Տէրը հեռու կը թուէր՝ նոյնիսկ որ գիտէի, որ ես Իր զաւակն էի: Երբ Աստուածաշունչը կը կարդայի, դժուար կը հասկնայի, եւ միայն սահմանափակ չափով կը հասկնայի՝ հակառակ անոր որ ջանասիրութեամբ կը կարդայի: Նաեւ չունէի կարողութիւնը յաղթական կեանքը ապրելու ընդդէմ փորձութիւններու՝ յատկապէս իբրեւ համալսարանի ուսանող տարեկիցներէ եկած ճնշումին տակ:

Ժամանակ մը ետք սկսայ հանդիպիլ մարդոց, որոնք կարծես անելի մօտէն կը քալէին Տիրոջ հետ: Անոր մասին կը խօսէին անձնական ձեւով:

41 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Ես շփոթի մէջ էի: Կարծես անոնք Տիրոջ ձեւերը գիտէին եւ զօրութիւնը ունէին, բաներ՝ զորս ես չուէին: *Ինչո՞ւ բացակայ էր այդ կապը:* Ես ինձի հարց կու տայի: Յետոյ մինչ կը սերտէի Աստուածաշունչը, անդրադարձայ, որ կար Տիրոջ հետ հանդիպում մը, զոր ես տակաւին չէի ունեցած. Սուրբ Հոգիի մկրտութիւնը: Այդ փորձառութիւնը անկիւնադարձը եղաւ Աստուծոյ հետ ընթացքիս մէջ:

Սուրբ Հոգիի մկրտութիւնը կարելի չէ շահիլ կամ գնել. անիկա պէտք է ստանալ: Սուրբ Գիրքերը կը յայտնաբերեն երեք պարզ քայլեր, որոնք մեզ կը դնեն այդ մկրտութիւնը ունենալու դիրքին մէջ.

Փափաքիլ- Յիսուս յայտնաբերեց, թէ Աստուծոյ համար քու ունեցած անօթութեան եւ ծարաւի մակարդակդ պիտի որոշէ այն մակարդակը, որով պիտի լեցուիս. «Երանի անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագենան» (Մատթէոսի 5.6):

Խնդրել- Յիսուս ուսուցանեց. «Արդ, եթէ դուք որ չար էք՝ գիտէք ձեր զաւակներուն լաւ պարգեւներ տալ, ձեր երկնաւոր Հայրը որքան լաւ պարգեւ մը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն» (Ղուկասի 11.13):

Հաւատալ- Պօղոս Գաղատիոյ եկեղեցիին յիշեցուց. «Սա՛ միայն կ'ուզեմ գիտնալ, ըսէք, Օրէնքի գործադրութեամբ Սուրբ Հոգին ստացաք, թէ Աւետարանի պատգամին հաւատալով» (Գաղատացիներուն 3.2):

Սուրբ Հոգիի մկրտութիւնը փորձառութիւն մըն է, որուն ընթացքին յորդելու չափ կը լեցուիս

Աստուծոյ Հոգիով. Իր ներկայութիւնը կը ողողէ եւ կը յագեցնէ քեզ մինչեւ որ Ինքնին Աստուած կը լափէ քեզ: «[Որպէսզի իրապէս] գիտնաք [գործնապէս, անձնական փորձառութեամբ] Քրիստոսի սէրը, որ աւելի անդին է սոսկ գիտութենէն [առանց փորձառութեան]. որպէսզի լեցուիք [ձեր ամբողջ էութեամբ] Աստուծոյ լիութեամբ [կարենաք ունենալ աստուածային Ներկայութեան ամէնէն հարուստ չափը, եւ դառնաք մարմին մը, որ ամբողջութեամբ լեցուած եւ ողողուած է Ինքնին Աստուծմով]» (Եփեսացիներուն 3.19⁴²):

Կը խնդրեմ, որ հասկնաք, որ Սուրբ Հոգիով լեցուիլը մէկ անգամուան իրադարձութիւն մը չէ, այլեւ շարունակական փորձառութիւն մը: Պօղոս քաջալերեց, ըսելով. «Եւ մի՛ գինովնաք գինիով, որովհետեւ ատիկա անառակութիւն է. այլ՝ շարունակ լեցուեցէք եւ խթանուած եղէք [Սուրբ] Հոգիով» (Եփեսացիներուն 5.18⁴³): Սուրբ Հոգին առանցքային է մեր Քրիստոնէական փորձառութեան համար:



ԿՐԱԿԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Այս մկրտութիւնը ուղղակի կապ ունի Սուրբ Հոգիի մկրտութեան հետ: Յովհաննէս Մկրտիչ Յիսուսի մասին ըսաւ. «Ես ձեզ ջուրով կը մկրտեմ, բայց շուտով կու գայ մէկը, որ ինձմէ մեծ է. այնքան մեծ, որ Անոր ստրուկը ըլլալու եւ Անոր կօշիկին կապերը քակելու իսկ արժանի չեմ ես: Ան պիտի մկրտէ ձեզ

42 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփոխայր Պայպըլ*, *Քլասիք Էփոշըն* (AMPC) տարբերակէն

43 Նոյնը

Սուրբ Հոգիով եւ կրակով» (Ղուկասի 3.16⁴⁴):

Կրակի մկրտութիւնը կը ներկայացնէ մաքրութիւն: Երբ կը լեցուիս Սուրբ Հոգիով, Ան կը սկսի սրբագործութիւն մը, որ կ'արտադրէ մաքրութիւն եւ հասունութիւն: Կրակի մկրտութիւնը կը պարունակէ որոշ տառապանք: Յստակացնեմ, որ Աստուած չէ այդ տառապանքին պատճառը: Այլ՝ Ան զանիկա կը գործածէ զօրացնելու համար մեր հաւատքը եւ հասունցնելու համար Իր բարութեան եւ հաւատարմութեան վերաբերեալ մեր հասկացողութիւնը (տես Յակոբոսի նամակի առաջին գլուխը):

Պետրոս առաքեալ գրեց.

Ուստի ճշմարտապէս ուրախ եղէք: Հոյակապ ցնծութիւն մը կայ ձեր առջեւ հակառակ անոր որ պէտք է կարճ ժամանակ մը շատ փորձութիւններու դիմանաք: Այդ փորձութիւնները ցոյց պիտի տան ձեր հաւատքին անկեղծ ըլլալը: Ատիկա փորձուիլ է այնպէս ինչպէս կրակի մէջ կը փորձուի եւ կը զտուի ոսկին, հակառակ անոր որ դուք շատ աւելի թանկագին էք քան պարզ ոսկին: Ուստի երբ ձեր հաւատքը ամուր կը մնայ շատ մը փորձութիւններէ անցնելէ ետք, ատիկա ձեզի գովաբանութեան եւ փառքի պիտի արժանացնէ այն օրը երբ Յիսուս Քրիստոս պիտի յայտնուի ամբողջ աշխարհին: (Ա. Պետրոսի 1.6-7⁴⁵)

Սիրելիներ, տարօրինակ մի՛ համարէք որեւէ փորձութիւն, որ կրակի պէս կ'այրէ ձեզ: Անբնական մի՛ համարէք զայն, այլ՝ Քրիստոսի

44 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

45 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

չարչարանքներուն մասնակցութիւն նկատեցէք եւ ուրախացէ՛ք, որպէսզի երբ Քրիստոս իր փառքով յայտնուի՝ նոյնպէս ցնծութեամբ ուրախանաք: (Ա. Պետրոսի 4.12-13)

Կրակի մկրտութիւնը նաեւ կը կոչուի՝ «Չարչարանքի Մկրտութիւն»: Ասիկա իւրայատուկ մկրտութիւն մըն է, երբ կը մխրճուիս մաքրագործման կամ զտումի եղանակի մը մէջ՝ պատրաստութեան նպատակով: Կեանքիդ համար Աստուծոյ ծրագիրին իրագործումը անխուսափելիօրէն պիտի պահանջէ, որ ամբողջ էութեամբդ՝ հոգի, շունչ եւ մարմին, ինքզինքդ Աստուծոյ ձեռքերուն մէջ յանձնես:

Այս չարչարանքի մկրտութիւնը նշուած է Մարկոսի 10.38-ին մէջ: Յիսուսի կը մօտենան երկու աշակերտներ՝ Յակոբոս եւ Յովհաննէս, որոնք Իրմէ կը խնդրեն, որ իրենց տայ պատիւը նստելու Իր գահին աջին ու ձախին:

Իբրեւ պատասխան, Յիսուս կ'ըսէ. «Չէք գիտեր ինչ կը խնդրէք: Կրնա՞ք խմել չարչարանքի այն դառն գաւաթէն, որմէ ես կը պատրաստուիմ խմել: Կարո՞ղ էք մկրտուելու այն *չարչարանքի մկրտութեամբ*, որով ես պէտք է մկրտուիմ»:

«Այո՛», պատասխանեցին երկու աշակերտները: «Կարո՞ղ ենք»:

Ապա Յիսուս ըսաւ անոնց. «Իրապէս պիտի խմէք Իմ դառն գաւաթէս եւ պիտի մկրտուիք Իմ *չարչարանքներու մկրտութեամբ*: Բայց ես իրաւունք չունիմ ըսելու, թէ ո՞վ պիտի նստի իմ աջիս կամ ձախիս: Աստուած այդ տեղերը պատրաստեր է անոնց համար, զորս Ինք ընտրած է» (Մարկոսի 10.39⁴⁶):

46 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Դժբախտաբար շատեր չեն հասկնար նպատակը փորձութիւններուն եւ չարչարանքին: Մեզ լուսաւորելու համար, Պօղոս գրեց. «Որովհետեւ Քրիստոսի պատճառով՝ ձեզի շնորհուեցաւ ո՛չ միայն հաւատալ անոր, այլ նաեւ չարչարուիլ անոր համար» (Փիլիպպեցիներուն 1.29⁴⁷):

Շփոթի կը մատնուի՞ն երբ մտածես, թէ քեզի շնորհուած է չարչարուիլ: Ինչպէս կարելի է, որ «շնորհուած» եւ «չարչարուիլ» բառերը նոյն նախադասութեան մէջ ըլլան: Կրնայ ըլլալ, որ չարչարանքի մասին սխալ տեսակէտ մը ունիս:

Որեւէ փորձութեան մէջ, զոր կը դիմագրաւենք, Աստուած կ'արտօնէ այդ դժուարութիւնները նպատակով մը. նկարագիր եւ կարողականութիւն կերտելու համար մեր մէջ: Աստուած դժուարութիւն մը պիտի արտօնէ այսօր, որ մեզ պիտի զինէ այն մակարդակի ճնշումին համար, զոր պիտի դիմագրաւենք վաղը: Աստուած մեր ներկայի մարտահրաւերները կը գործածէ՝ զօրացնելու համար մեզ աւելի մեծ նուաճումի մը համար ապագային: Ատոր համար փորձութիւնը միշտ աւելի մեծ կը թուի քան մեր ներկայի պատրաստուածութեան կամ պատասխանատուութեան մակարդակը: [Կը խնդրեմ, որ նկատի առնէք, որ կը գործածեմ «արտօնել» բառը, տրուած ըլլալով, որ Աստուած չէ փորձութիւններուն հեղինակը: Յակոբոս կը գրէ. «Յիշեցէք, որ երբ փորձութեան մէջ էք, մի՛ ըսէք՝ “Աստուած կը փորձէ զիս”: Աստուած բնաւ չի փորձուիր սխալ գործելու, եւ Ան բնաւ չի փորձեր ուրիշը» (1.13⁴⁸):

47 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Երբայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

48 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Որեւէ դժուարութեան կամ չարչարանքի մէջ միշտ խոստում մը կայ: Յակոբոս մեզի կ'ըսէ. «Ձեզի համար նուէրէ պակաս բան մը մի՛ համարէք, բարեկամներ, երբ ամէն կողմէ փորձութիւններ եւ մարտահրաւերներ կու գան ձեր վրայ: Գիտէք, որ ճնշումի տակ ձեր հաւատքի կեանքը մէջտեղ կ'ելլէ եւ իր ճիշդ գոյնը ցոյց կու տայ: Ուստի մի՛ փորձէք որեւէ բանէ պէտք եղածէն աւելի շուտ ելլել: Արտօնեցէք, որ անիկա իր գործը ընէ, որպէսզի հասուննաք եւ լաւապէս զարգանաք եւ որեւէ առումով թերի չըլլաք» (1.2-4⁴⁹):

Երբ տառապանք կը կրես եւ անոր ամբողջ ընթացքին Աստուծոյ հնազանդ կ'ըլլաս, անկէ դուրս կ'ելլես զօրացած, լաւապէս զարգացած եւ պատրաստ՝ քեզի համար Աստուծոյ ունեցած յաջորդ ծրագիրին: Յակոբոս մեզի նաեւ ըսաւ, թէ տառապանքին միւս կողմը ի՛նչ կայ. «Երանի՛ այն մարդուն՝ որ կը տոկայ փորձութեան. որովհետեւ երբ փորձարկուի եւ ընտիր գտնուի՝ պիտի ստանայ կեանքի պսակը, զոր Տէրը խոստացաւ զինք սիրողներուն» (1.12):

«Պսակ» բառը կը խօսի իշխանութեան մասին, եւ իշխանութեան հետ կու գայ զօրութիւն: Յիսուս փորձութեան հանգրուանի մը մէջ մտաւ անապատին մէջ, որպէսզի փորձուի չարախօսին կողմէ: Իր հնազանդութեան եւ յարատեւութեան շնորհիւ, Ան դուրս եկաւ աւելի մեծ իշխանութեամբ եւ զօրութեամբ (տե՛ս Ղուկասի 4.1,14): Ճիշդ Յիսուսի պէս, մենք ալ կրնանք տառապանքէն դուրս գալ աւելի մեծ իշխանութիւնով եւ զօրութիւնով:

Սաղանայի Խայծը գիրքս ամէնէն շատ քանակութեամբ վաճառուող գիրքերու ցանկին

49 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Սաւէճ* (MSG) տարբերակէն

(պէսթ-սելլըր) վրայ է աւելի քան քսանհինգ տարիէ ի վեր: Անիկա անհամար մարդիկ ազատ արձակած է գայթակղութեան մահացու ծուղակէն: Տարիներու ընթացքին աշխատակազմս եւ ես բազմաթիւ վկայութիւններ ստացած ենք, թէ այդ պատգամը ճիշդն է խորապէս ազդած է կեանքերու, ամուսնութիւններու եւ եկեղեցիներու վրայ: Սակայն նախքան մէկ բառ իսկ գրելս, անցայ տառապանքի հանգրուանէ մը, որուն ընթացքին դիմագրաւեցի դաւաճանութեան շատ ցաւալի պարագայ մը: Այդ հանգրուանը տեւեց քանի մը տարի, որուն ընթացքին սորվեցայ ազատագրուիլ գայթակղութեան ազդեցութիւններէն եւ աճիլ Աստուծոյ հնազանդութեան մէջ: Երբ այդ դժուարութեան ժամանակէն անցայ յաջողութեամբ, այլեւս կարող էի խօսելու եւ գրելու գայթակղութեան նիւթին մասին՝ համոզումով, իշխանութեամբ եւ զօրութեամբ: Պատգամը նախ ձեւաւորուեցաւ իմ մէջս նախքան որ խօսուի կամ գրուի իմ միջոցաւ: Այդ մարզին մէջ յաղթանակ ունենալէ ետք, կրնայի ուրիշներու ոյժ տալ, որպէսզի նոյնը ընէին:

Կրկնեմ. Քրիստոսի այն չարչարանքները, որոնցմէ կ'արտօնուի, որ անցնինք կապ չունին տառապանքին հետ այն բաներուն պատճառով, որոնցմէ Ան փրկած է մեզ, ինչպէս՝ հիւանդութիւնը կամ աղքատութիւնը: Մեր ապրած տառապանքը ես-ին եւ մեր մարմնատրին մեղանշական բնոյթին մեռնիլն է: Ինչպէս Պետրոս նշեց. «Արդ, որովհետեւ Քրիստոս մեզի համար չարչարուեցաւ մարմինով, դուք ալ նոյն մտածումով զինուեցէք, որովհետեւ մարմինով չարչարուողը կը դադրի մեղանշելէ» (Ա. Պետրոսի 4.1):

Չարչարանքի մկրտութիւնը (անոր մէջ սուզուիլը) պատրաստութեան նպատակով է. անկէ դուրս պիտի գանք Քրիստոսով մեր կոչումը

կատարելու համար նոր տեղադրումով կամ տրամադրուածութեամբ: Ճիշդ իմ փորձառութեանս նման, այն կրակը՝ որ սկսնականօրէն մաքրեց մեզ, պիտի ազատագրէ ուրիշները, որոնց կը հանդիպինք:



Մէկ նիւթ կայ, որ կը կրկնուի տարբեր տեսակի մկրտութիւններուն մասին խօսելու ատեն, այն ալ՝ ամբողջական մխրճումն է: Ատիկա կը նշանակէ, թէ ամբողջապէս մէջն ես. ոչինչ ետ պահած ես: Ամբողջութեամբ նուիրուած ես կեանքի այդ նոր ձեւին:

Անիկա գեղեցիկ փոխանակում մըն է քու եւ Աստուծոյ միջեւ. քու կեանքդ՝ Իրենինին փոխարէն:



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ինչու կարելոր է ջուրի մկրտութիւնը: Ինչ կը ներկայացնէ անիկա:
2. Ինչ է արդիւնքը Սուրբ Հոգիի մկրտութեան եւ ինչո՞ւ անիկա կարելոր է հաւատացեալի մը կեանքին մէջ:
3. Երբ կը մկրտուինք Քրիստոսի Մարմինին մէջ, ինչ են օգուտները Աստուծոյ ընտանիքին պատկանելուն:
4. Չարչարանքներու մկրտութեան մասին հասկացողութիւն մը ունենալէ ետք, ինչո՞ւ այդ մկրտութիւնը կարելոր է քեզի համար:

Ձեռնադրութիւն

Ուստի, քրիստոնէական հաւարքի նախագիտելիքները ձգելով՝ գանք չափահասներու յատուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ [...] ձեռնադրութեան [...]: (Եբրայեցիներուն 6.1-2)

«Ձեռնադրութեան» (կամ ձեռք դնելով աղօթելու) վարդապետութիւնը հասկնալու համար, պէտք է նախ հասկնանք իշխանութեան վերաբերեալ թագաւորութեան սկզբունքը: Աստուածաշունչը մեզի յստակօրէն կ'ըսէ, թէ ամէն իշխանութիւն Աստուծմէ կու գայ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծոյ կողմէ կարգուած են (տե՛ս Հռոմայեցիներուն 13.1): Ուրիշ ձեռով մը ըսեմ. երբ կը հանդիպիս Աստուծոյ, հանդիպած կ'ըլլաս իշխանութեան, որովհետեւ Աստուած եւ Անոր իշխանութիւնը անբաժան են:

Յոյց տուր ինձի անձ մը, որ յարգանք չունի իշխանութեան հանդէպ եւ քեզի ցոյց կու տամ մէկը, որ չի ճանչնար զԱստուած: Յոյց տուր ինձի անձ մը, որ խորունկ յարգանք ունի իշխանութեան նկատմամբ եւ քեզի ցոյց կու տամ մէկը, որ կամ կը ճանչնայ զԱստուած կամ մօտեցած է զԱյն գտնելու: Ասիկա տագնապ կը յառաջացնէ շատերու մօտ,

որովհետեւ կոշտ, դաժան, կոպիտ եւ նոյնիսկ անպարկեշտ իշխանութիւններ ունեցած են: Այդ պարագային, կը խնդրեմ, որ անգամ մը եւս սերտես Հռոմայեցիներուն 13.1-ը եւ նկատի առնես, որ Պօղոս չգրեց, թէ ամէն իշխանութիւն բարեպաշտ է կամ աստուածավախ: Իշխանութիւնը կրնայ Աստուծմէ ըլլալ, բայց անոր վարմունքը՝ ոչ: Օրինական իշխանութիւններու միջոցաւ գործելու Աստուծոյ կարողութիւնը՝ հակառակ անոնց բազմաթիւ անկատարութիւններուն, ուրիշ վկայութիւն մըն է Աստուծոյ սքանչելի գերիշխանութեան մասին:

Իշխանութիւնը վերջ ի վերջոյ կեանքի ձեւն է Աստուծոյ թագաւորութեան: Անոր ենթարկուելով, կու գանք Անոր աստուածային հովանաւորութեան եւ պաշտպանութեան տակ, եւ այդ պարունակին մէջ օրինութիւն եւ զօրութիւն կը փոխանցուին մեզի:

Կը հասկնամ, որ այդ հիմնական սկզբունքը կրնայ անյստակ թուիլ, բայց յաւելեալ սերտողութենէ ետք, պիտի հասկնաք անոր նշանակութիւնը: Ձեռնադրութիւնը այն արարքն է երբ օրինական իշխանութիւնը ձեռք կը դնէ մէկու մը վրայ՝ որոշ հոգեւոր նպատակի մը համար: Այդ արարքին կ'ընկերանայ աղօթք մը, մարգարէական պատգամ մը կամ երկուքը, եւ անիկա կը խորհրդանշէ փոխանցում եւ ճանաչում:

Ձեռնադրութեան կիրառութիւնը կը տեսնենք ամբողջ Աստուածաշունչին մէջ՝ Հին եւ Նոր Կտակարաններուն, եւ զանիկա կը տեսնենք զանազան կացութիւններու կամ պայմաններու մէջ: Այդ արարքը այնքան կարելոր էր մեր հոգեւոր հայրերուն համար, որ Պօղոս զգուշացուց, թէ պէտք չէր անիկա անփոյթօրէն կատարել. «Մի՛ աճապարեր ուեւ մէկուն վրայ ձեռք դնելու [...]» (Ա.Տիմոթէոսի 5.22):

Աստուածաշունչին մէջ կը տեսնենք շարք մը յատուկ նպատակներ ձեռնադրութեան համար: Այս գլուխին մէջ հակիրճ կերպով պիտի քննենք անոնցմէ իւրաքանչիւրը:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՆՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իսրայէլ իր աջ ձեռքը երկարեց եւ Եփրեմի գլուխին վրայ դրաւ՝ որ կրտսերն էր, ու իր ձախ ձեռքը՝ Մանասէի գլուխին վրայ. ան գիտակցաբար իր ձեռքերը փոխեց, որովհետեւ Մանասէ անդրանիկն էր: (Ծնունդներու 48.14)

Օրհնութիւն կը փոխանցուի ձեռնադրութեամբ: «Օրհնութիւն» բառին բուն սահմանումն է՝ լիազօրել մէկը, որպէսզի բարգաւաճի: Այդ լիազօրումը շատ կարեւոր է մեր հոգեւոր աճման համար: Վերի պատմութեան մէջ Իսրայէլ կ'օրհնէ Յովսէփի որդիները՝ Մանասէն եւ Եփրեմը, իր ձեռքերը դնելով անոնց վրայ: Ան դիտումնաւոր կերպով իր աջ ձեռքը կը դնէ Եփրեմի վրայ: Աւանդաբար, անդրանիկը կը ժառանգէր աւելի մեծ օրհնութիւնը: Սակայն Իսրայէլ իր ձեռքերը գիտակցաբար փոխեց՝ առաջնորդուած ըլլալով Սուրբ Հոգիէն: Ասիկա ցոյց կու տայ, թէ ոչ միայն կարեւոր է ձեռք դնելը, այլեւ աստիկա ընելու ձեւը: Օրհնութիւնը սերունդէ սերունդ կը փոխանցուի ձեռք դնելով:

ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԿԱՐԳԵԼ

Մովսէս Յեսուն կարգեց իբրեւ իր յաջորդը: Յեսուի կարգումին օրը Մովսէս ձեռնադրեց զինք վկաներու ներկայութեամբ: Ասիկա կը ներառէր

նաեւ հոգեւոր իշխանութեան փոխանցում. «Տէրը Մովսէսի ըսաւ. “Ա՛ն քեզի Նաւէի որդին՝ Յեսուն, որուն վրայ Հոգի կայ, եւ դիր ձեռքդ անոր վրայ: Կայնեցնոր զայն Եղիազար քահանային ու ամբողջ համայնքին առջեւ, պատուէր տուր անոր՝ անոնց աչքերուն առջեւ, եւ դիր քու պատիւէդ անոր վրայ, որպէսզի Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը անոր հնազանդի” [...] Մովսէս ըրաւ ինչպէս Տէրը իրեն պատուիրեր էր. առաւ Յեսուն, զայն Եղիազար քահանային եւ ամբողջ համայնքին առջեւ կայնեցուց, ու իր ձեռքերը անոր վրայ դնելով՝ անոր պատուէր տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի միջոցով ըսեր էր» (Թիւերու 27.18-20,22-23):

Նոր Կտակարանին մէջ կը տեսնենք, թէ առաջնորդներ կը կարգուին առաջին դարու եկեղեցոյ գործնական հարցերը կարգաւորելու համար. որոշակի պարագայի մը մասին կը կարդանք, թէ ատիկա այրիներուն կերակուր բաժնելու պարտականութիւնն էր: Զանոնք զգուշութեամբ ընտրելէ ետք, առաքեալները իրենց ձեռքերը դրին անոնց վրայ՝ լիազօրելով զանոնք թագաւորութեան ծառայութեան համար. «Հետեւաբար, եղբայրներ, ձեր կողմէ վկայուած եօթը հոգի ընտրեցէք, որոնք Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն ըլլան: Զանոնք այս անհրաժեշտ գործին համար կարգենք [...] Հաւատացեալները ուղիղ գտան առաջարկը եւ հետեւեալները ընտրեցին.- Ստեփանոսը, որ հաւատքով եւ Սուրբ Հոգիով լեցուն մարդ մըն էր, Փիլիպպոսը, Պրոքորոնը, Նիկանորը, Տիմոնը, Պարմենասը եւ Նիկողայոսը, որ հրէութեան դարձած Անտիոքացի մըն էր: Ապա զանոնք բերին առաքեալներուն առջեւ, որոնք աղօթեցին եւ իրենց ձեռքը դրին անոնց վրայ» (Գործերը 6.3,5-6):

Առաքեալները ուշադիր եղան, որ ընտրեն մարդիկ, որոնք լաւ համբաւ ունէին եւ Սուրբ Հոգիով լեցուած էին: Նոր ծառայութեան համար խումբի ղեկավարներ զգուշութեամբ ընտրելու այդ գործը կարեւոր էր ւսետարանին տարածման համար:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Հակառակ անոր որ մարդիկ կրնան Սուրբ Հոգիով մկրտուիլ առանց ձեռք դնելու, կան շատ պատմութիւններ ձեռք դնելէ ետք հաւատացեալներու Հոգիով լեցուելուն մասին: «Առաքեալները, որ Երուսաղէմ կը մնային, երբ լսեցին, թէ Սամարացիները Աստուծոյ խօսքը ընդունեցին, անոնց քով դրկեցին Պետրոսն ու Յովհաննէսը, որոնք երբ հասան՝ աղօթեցին անոնց վրայ, որպէսզի Սուրբ Հոգին ստանան, որովհետեւ մինչ այդ Սուրբ Հոգին անոնցմէ ոեւէ մէկուն վրայ չէր իջած, այլ միայն Տէր Յիսուսի անունով մկրտուած էին: Այն ատեն Պետրոս եւ Յովհաննէս իրենց ձեռքերը դրին անոնց գլխուն եւ անոնք Սուրբ Հոգին ստացան» (Գործերը 8.14-17):

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Հին Կտակարանին մէջ կը տեսնենք, որ ձեռք դնելով Մովսէս իր մէջ գտնուող իմաստութիւնը կը փոխանցէ Յեսուին. «Նաւէի որդին՝ Յեսու իմաստութեան հոգիով լեցուած էր, որովհետեւ Մովսէս իր ձեռքերը անոր վրայ դրեր էր: Ուստի Իսրայէլի որդիները անոր հնազանդեցան, եւ Տէրոջ Մովսէսի պատուիրածին համաձայն ըրին» (Բ. Օրէնքի 34.9):

Ատոր մէկ օրինակը եւս կը տեսնենք Նոր

Կտակարանին մէջ՝ Պօղոսի եւ Տիմոթէոսի հետ կապուած: Պօղոս զգուշացուց Տիմոթէոսը, ըսելով. «Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ, որ մարգարէական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երէցները ձեռք դրին քու վրադ» (Ա. Տիմոթէոսի 4.14): Ձեռք դնելով, Պօղոս հոգետր պարգեւ մը փոխանցեց Տիմոթէոսին՝ ինչ որ հաստատեց զինք եւ լիազօրեց ծառայութեան համար: Տեսնելով, որ իր պարգեւը կ'անտեսուի, Պօղոս անոր գրեց. «Այդ պատճառով ալ կը յիշեցնեմ քեզի, որ բոցավառ պահես այն շնորհքը, որ Աստուած քեզի տուաւ՝ երբ քեզ ձեռնադրեցի» (Բ. Տիմոթէոս 1.6):

Ամբողջ եկեղեցւոյ պատմութեան ընթացքին ձեռք դնելը սովորութիւն դարձած վարժութիւն մըն էր երբ կ'ուզէին լիազօրել կամ ամրապնդել նոր հաւատացեալներ: Այդ պատճառով Պօղոս գրեց. «Որովհետեւ շատ կը փափաքիմ ձեզ տեսնել, որպէսզի ձեզի փոխանցեմ որեւէ հոգետր պարգեւ որ ձեզ ամրապնդելու կը ծառայէ» (Հռոմայեցիներուն 1.11):

ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼ

Երբ Պօղոս եւ Բառնաբաս ղրկուեցան իրենց առաջին առաքելական ճամբորդութեան, Անտիոքի եկեղեցւոյ ղեկավարները մէկտեղուեցան՝ աղօթելու եւ ծոմ պահելու համար: Մինչ Տիրոջ կը հարցնէին, Սուրբ Հոգին յստակօրէն ըսաւ, որ այդ երկու մարդիկը պէտք էր անջատուէին այն յատուկ գործին համար, որուն կոչուած էին: «Օր մը, երբ ասոնք Տիրոջ պաշտամունք կը մատուցանէին ծոմ վիճակով, Սուրբ Հոգին ըսաւ. “Տրամադրեցէք Բառնաբասն ու Սօղոսը այն գործին՝ որուն կոչած եմ զիրենք”: Այն ատեն ծոմապահութեամբ եւ աղօթքով ձեռք դրին անոնց վրայ եւ ղրկեցին» (Գործերը 13.2-3):

Լիսան եւ ես Բառնաբասի եւ Սօղոսի փորձառութեան մօտիկ փորձառութիւն մը ունեցանք: 1980-ականներու վերջերը երբ պատանիներու խումբի հովի էի, Աստուծոյ Հոգին յայտնեց ինձի, թէ փոփոխութիւն մը պիտի պատահէր: Ըսաւ. «Դուն այլեւս պատանիներու խումբի հովի պիտի չըլլաս: Ես քեզ պիտի դրկեմ եկեղեցիներ եւ քաղաքներ Ամերիկայի արեւելեան ափէն մինչեւ արեւմտեան ափը, Քանատայի սահմանէն մինչեւ Մեքսիքոյի սահմանը, Ալասքայէն՝ Հաուայի...»:

Բայց ատիկա յաջորդ օրը կամ նոյնիսկ այդ շաբաթը չպատահեցաւ: Ամիսներ անցան այն օրէն երբ ես ստացայ այդ պատգամը, որ կ'ըսէր, թէ փոփոխութիւն մը պիտի պատահէր: Ապա օր մը հովիւս ժողովի մտաւ եւ ըսաւ, թէ Տէրը իրեն ըսեր էր, թէ իր հովիւներէն մէկը (տասնմէկ հովիւ ներկայ էր ժողովին) շուտով լման ժամով ճամբորդելու ծառայութիւն մը պիտի սկսէր եւ այլեւս եկեղեցւոյ անձնակազմին մաս պիտի չկազմէր: «Ճոն Պըվիթ, այդ մարդը դո՛ւն ես», ըսաւ ան: Կարճ ժամանակ ետք, 1990 Յունուարին, հովիւը ձեռք դրաւ Լիսայի եւ իմ վրաս, եւ այդ ժամանակէն ի վեր մենք լման ժամով ճամբորդութեան ծառայութեան մէջ ենք: Կ'ուզեմ նշել, թէ մենք շատ աւելի պտուղ տեսանք երբ սպասեցինք Աստուծոյ ժամանակին քան եթէ մենք մեզ արձակած ըլլայինք այս ծառայութեան մէջ երբ կը կարծէինք, թէ պատրաստ էինք:

ՀԻՒԱՆԴՆԵՐ ԲԺՇԿԵԼ

Աստուծոյ բժշկող զօրութիւնը կը փոխանցուի հաւատացեալներու կողմէ ձեռք դնելու միջոցաւ: Ատոր օրինակը մեզի տուաւ Յիսուս, որ իր երկրաւոր առաքելութեան ընթացքին հիւանդները բժշկեց եւ դեւեր հանեց ձեռք դնելով.

«Արեւնամուտին, բոլոր անոնք, որոնք զանազան ցաւերէ բռնուած հիւանդներ ունէին, Յիսուսի բերին: Յիսուս անոնցմէ իւրաքանչիւրին վրայ իր ձեռքերը դնելով՝ կը բժշկէր զանոնք: Շատերու մէջէն դեւեր ալ կ'ելլէին» (Ղուկասի 4.40-41):

Նախքան երկինք բարձրանալը, Յիսուս հաւատացեալներուն յանձնարարեց, որ շարունակեն Իր գործը՝ ատետարանը քարոզելով եւ չարախօսին գործերը կործանելով. «Անոնք, որոնք կը հաւատան՝ հետեւեալ նշաններով յայտնի պիտի ըլլան.- Իմ անունովս չար ոգիներ պիտի հանեն [...] հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն եւ զանոնք բժշկեն» (Մարկոսի 16.17-18):

Մինչ մենք մեր ձեռքերը կը դնենք մարդոց վրայ, անոնց համար կը դառնանք այն հպումի կէտը, ուր երկինքը երկիր կը ներխուժէ:



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ո՞ր կէ ծնունդ առած է իշխանութիւնը, եւ ինչո՞ւ կարեւոր է անիկա:
2. Բացատրէ, թէ Աստուածաշունչը ի՞նչ ըսել կ'ուզէ ձեռնադրութեամբ կամ ձեռք դնելով:
3. Թուէ՞ վեց օգուտները ձեռնադրութեան կամ ձեռք դնելու ծառայութեան:

Մեռելներու Յարութիւն

Ուստի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ գանք չափահասներու յարուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ [...] մեռելներու յարութեան [...]: (Եբրայեցիներուն 6.1-2)

Յարութիւնը հաւատացեալին մեծ յոյսն է: Պօղոս գրեց, թէ կ'ուզեր հասնիլ յարութեան՝ երկնաւոր մրցանակին: Ան իր աչքերը սեւեռած էր շինարարութեան գործընթացի վերջին հանգրուանին՝ վերջնական փրկութեան: Ան գրեց. «Որպէսզի կարենամ հասնիլ մեռելներուն յարութեան: Ո՛չ թէ ես արդէն ստացած եմ մրցանակը, կամ արդէն կատարեալ եղած եմ. հապա հետամուտ եմ բռնելու զայն, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ» (Փիլիպպեցիներուն 3.11-12⁵⁰):

Դուն կեդրոնն ես Աստուծոյ սիրոյն: Ատոր համար Ան քեզի համար պիտի վերադառնայ եւ իր քով առնէ քեզ յաւիտեան: Յիսուս կը փափաքի,

50 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

որ յափտեան իրեն հետ ըլլանք. Ան այնքան կը փափաքի ատիկա, որ մեզի համար տեղ պատրաստած եւ ապահոված է, որպէսզի ո՛ր որ ինք է՝ մենք ալ կարենանք հոն ըլլալ: Ան մեզի վստահեցուց, թէ՛ «Հօրս տան մէջ շատ օթեաններ կան. եթէ այդպէս չըլլար՝ չէի ըսեր ձեզի, թէ կ'երթամ եւ ձեզի համար տեղ կը պատրաստեմ: Եւ երբ երթամ եւ ձեզի համար տեղ պատրաստեմ, դարձեալ պիտի գամ եւ ձեզ քովս առնեմ, որպէսզի ըլլաք հոն՝ ուր ես կը գտնուիմ» (Յովհաննէսի 14.2-3): Այդպիսի խոստում մը ունենալով, զարմանալի չէ, որ Հոգին եւ հարսը կ'ըսեն՝ «Եկ՛ուր» (տես Յայտնութիւնը 22.17):

Յարութեան յոյսը ունենալով, մենք պէտք չէ վախնանք մահէն: Այդ յոյսը մեզ կը մղէ, որ ապրինք կեանք մը, որ պատրաստ է Տիրոջ վերադարձին: Առաջին դարու եկեղեցին կ'ապրէր այն ակնկալութեամբ, որ Յիսուս կրնար որեւէ ատեն վերադառնալ՝ գիտնալով, որ Ան պիտի վերադառնայ գիշերուան գողին պէս: Այդ յոյսը բնաւ աշխարհէն փախուստ տալու մտայնութեամբ չէր դրսեւորուեր: Ընդհակառակը, ատիկա զանոնք կը լեցնէր հրատապութեան զգացումով, որպէսզի իրենց ազդեցութեան շրջանակը լեցնէին թագաւորութեան նպատակներով:

Յարութեամբ մենք մուտք պիտի գործենք յափտենական մարզէն ներս, ուր Տիրոջ հետ պիտի ըլլանք յափտենապէս: Հետեւաբար շատ կարեւոր է, որ հասկնանք, թէ ինչ կը սպասէ մեզի:

Տեղի պիտի ունենան երկու յարութիւններ. արդարներուն (Յիսուսի հետեւորդներուն) յարութիւնը եւ անարդարներուն (իրենց ուզած ձեռով ապրողներուն) յարութիւնը: Տարբերութիւնը այն է, որ անհաւատը յափտենապէս պիտի ունենայ

փտած հոգի, շունչ եւ մարմին, մինչ հաւատացեալը յափտենապէս պիտի ունենայ անարատ եւ փառաւորեալ հոգի, շունչ եւ մարմին: Այդ երկու տեսակի յարութիւններուն ականարկելով Յիսուս ըսաւ.

Հաստատ գիտցէ՞ք, ժամանակ կու գայ եւ արդէն իսկ եկած է, երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին [...] Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք, որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք, որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք, որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: (Յովհաննէսի 5.25,28-29)

Փրկութեան գործընթացի ամբողջ պատկերը հասկնալու համար, պէտք է հասկնանք մարդուն եռեակ բնութիւնը՝ հոգի, շունչ եւ մարմին: «Եւ Աստուած ինք, որ խաղաղութիւն կը պարգեւէ, թող կատարելապէս սրբէ ձեզ, եւ ձեր ամբողջ էութիւնը՝ հոգի, շունչ եւ մարմին, անարատ պահէ մինչեւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի գալստեան օրը» (Ա.Թեսաղոնիկեցիներուն 5.23): Փրկութեան պահուն մեր հոգին անմիջապէս կը փրկուի եւ շիտակ դիրքի մէջ կ'ըլլայ Աստուծոյ նկատմամբ: Մեր շունչը (միտքը, կամքը, զգացումները) կը փրկուի նորոգութեան գործընթացով մը, մինչ մեր մարմինները տակաւին պիտի փրկուին՝ տրուած ըլլալով, որ կը սպասենք յարութեան, որ իր գագաթնակէտին պիտի հասցնէ մեր փրկութեան փորձառութիւնը: Մինչ այդ մեր մարմինները կրնան յարութեան կեանքի նախաճաշակը ունենալ Աստուծոյ զօրութեան, հրաշքներուն եւ

բժշկութեան պարգեւներուն միջոցաւ (կարդա՛ Ա.Կորնթացիներուն 12 եւ Հռոմայեցիներուն 8.11):

Պօղոսի օրերուն մեծ բանավէճ կար յարութեան ուսուցումին մասին: Շատերու համար անիկա օտար գաղափար մըն էր, որ յատուկ էր աւետարանի պատգամին: Իր հաստատ կեցուածքին պատճառով, Պօղոս շատ հակառակութիւն եւ խնդիրներ ունեցաւ: Սակայն ատոնք պատճառ չեղան, որ Պօղոս լռէր, այլեւ գրգռեցին զինք՝ նոյնիսկ իր կեանքը վտանգի ենթարկելու գնով: Ան համարձակօրէն պնդեց.

Արդ, քանի մենք կը քարոզենք, թէ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է, ինչպէս ձեր մէջէն ոմանք կ'ելլեն ըսելու՝ թէ «Մեռելներու յարութիւն չկայ»: Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ. եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը: Այդ պարագային մենք Աստուծոյ համար սուտ վկայած կ'ըլլանք, քանի վկայեցինք՝ թէ Աստուած Քրիստոսը յարուցանեց. մինչդեռ եթէ ընդունինք, թէ մեռելները յարութիւն չեն առներ, ըսած կ'ըլլանք նաեւ՝ թէ Աստուած Քրիստոսը չյարուցանեց: Որովհետեւ եթէ կ'ըսենք՝ «Մեռելները յարութիւն չեն առներ», Քրիստոսի յարութիւնն ալ մերժած կ'ըլլանք: Իսկ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ինքնախաբէտութիւն է ձեր հաւատքը. ինչ որ կը նշանակէ՝ թէ տակաւին ձեր մեղքերուն մէջ էք: Ուրեմն ինչ. անոնք, որոնք Քրիստոսի հաւատացին եւ մեռան՝ կորսումձ են ընդմիշտ: Եթէ այդպէս է, եւ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Քրիստոսի վրայ, մարդոց մէջ ամէնէն խոճալիներն ենք: Բայց ո՛չ. Քրիստոս

արդարեւ մեռելներէն յարութիւն առած է, որպէս առաջին օրինակ մեռելներէն յարութեան: Ինչպէս մարդով մը սկիզբ առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիզբ կ'առնէ մեռելներէն յարութիւնը: Ինչպէս Ադամէ ծնածները բոլորն ալ կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսէ ծնածները բոլորն ալ պիտի կենդանանան: Բայց իրաքանչիւրը իր կարգին: Այժմ երախայրիքը՝ Քրիստոս, իսկ իր երկրորդ գալուատին՝ բոլոր իրեն պատկանողները: (Ա. Կորնթացիներուն 15.12-23)

Ինչպէս հաւատքի գլուխին մէջ նախապէս ըսինք, աւետարանին ամէնէն կարեւոր գործօններէն մէկը Յիսուս Քրիստոսի յարութիւնն է: Յիսուս մեռելներէն յարութիւն առաւ: Մեր աւետարանի պատգամէն յարութիւնը հանելը կը խափանէ անոր զօրութիւնը եւ մեր հաւատքը անպտուղ կ'ըլլայ: Ատոր համար Պօղոս կը մերժէ արտօնել աւետարանէն որեւէ զիջում կատարելը. չ'արտօներ, որ յարութեան մասին ուսուցումը ջնջուի կամ անտեսուի:

Յիսուս առաջին մարդն էր, որ ստացաւ յարուցեալ մարմին: Որովհետեւ Յիսուս յարութիւն առաւ, ատիկա երաշխաւորեց, որ անիկա մեզի ալ պիտի պատահի: Ան է մեր յոյսը: Մեր մարմինին յարութեան վստահութիւնը մեզի կը տրուի Սուրբ Հոգիին մեր մէջ բնակելովը. «Սուրբ Հոգիով կնքուեցաք» (Եփեսացիներուն 1.13-14): Պօղոս համարձակօրէն գրեց. «Եւ Քրիստոս կը բնակի ձեր մէջ, ուստի հակառակ անոր որ ձեր մարմինները պիտի մեռնին մեղքին պատճառով, Հոգին կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ դուք հաշտուած էք Աստուծոյ հետ: Աստուծոյ Հոգին՝ որ մեռելներէն յարուցանեց Յիսուսը, ձեր մէջ կը բնակի: Եւ ճիշդ ինչպէս Աստուած մեռելներէն յարուցանեց Քրիստոս

Յիսուսը, Ան կեանք պիտի տայ ձեր մահկանացու մարմիններուն նոյն այն Հոգիով, որ ձեր մէջ կ'ապրի» (Հռոմայեցիներուն 8.10-11⁵¹):

Ատիկա հոյականաւ լուր է: Աստուծոյ Հոգին կը հանդարտեցնէ մեր ախորժակը՝ մեզի արտօնելով, որ համտեսենք գալիք բաները: Ան երկինքը դրաւ մեր սիրտերուն մէջ, որպէսզի անկէ աւելի պակասը չընդունինք: Պօղոս մեզի ըսաւ, թէ պէտք է մէկս միւսը քաջալերենք հետեւեալ յոյսով.

Եղբայրներ, չենք ուզեր, որ անգէտ ըլլաք ննջեցեալներուն մասին, որպէսզի չտրտմիք ինչպէս ուրիշները՝ որ յոյս չունին: Արդարեւ եթէ կը հաւատաք, թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ հաւատանք, թէ Աստուած պիտի բերէ Յիսուսով ննջողները՝ անոր հետ: Որովհետեւ սա՛ կը յայտարարենք ձեզի՝ Տէրոջ խօսքով, թէ մենք՝ մինչեւ Տէրոջ գալուստը ողջ մնացողներս՝ բնա՛ւ պիտի չկանխենք ննջեցեալները: Քանի որ նոյնինքն Տէրը պիտի իջնէ երկինքէն՝ ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնով եւ Աստուծոյ փողով, ու նախ Քրիստոսով մեռածները յարութիւն պիտի առնեն: Ապա մենք, ողջ մնացողներս, անոնց հետ պիտի յափշտակուինք ամպերով՝ Տէրը դիմաւորելու օդին մէջ, եւ այդպէս Տէրոջ հետ պիտի ըլլանք յաւիտեան: Հետեւաբար մխիթարեցէք զիրար այս խօսքերով: (Ա. Թեսաղոնիկեցիներուն 4.12-17⁵²)

51 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

52 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Աստուածաշունչը յստակօրէն մեզի կ'ըսէ, թէ երբ Յիսուս վերադառնայ Եկեղեցիին համար՝ Իր Հարսին, մենք պիտի փոխուինք: Մեր մարմինները պիտի փոխակերպուին երկվայրկեանի մը մէջ: Որպէսզի օգնէ մեզի, որ հասկնանք յարութիւնը, Պօղոս գործածեց հողի մէջ սերմ ցանելու օրինակը: Գիտենք, որ ցանուածէն տարբեր բան մը դուրս կու գայ հողէն. շատ աւելի փառաւոր բան մը:

Ճիշդ այդպէս պիտի ըլլայ նաեւ մեռելներու յարութիւնը: Մարմինը հող կը դրուի եղծանելի վիճակով, եւ յարութիւն կ'առնէ՝ անեղծ. հող կը դրուի անարգ, եւ յարութիւն կ'առնէ՝ փառաւոր. հող կը դրուի տկար, եւ յարութիւն կ'առնէ՝ զօրաւոր. հող կը դրուի իբրեւ շնչաւոր մարմին, եւ յարութիւն կ'առնէ՝ իբրեւ հոգեւոր մարմին: Ինչպէս որ շնչաւոր մարմին կայ, այնպէս ալ հոգեւոր մարմին կայ: Սուրբ գիրքին մէջ այսպէս գրուած է. *«Առաջին մարդը՝ Ադամ, սրտեղծուեցաւ իբրեւ շնչաւոր էակ»*, մինչ երկրորդ Ադամը՝ կենդարար հոգի է: Արդ, շնչաւոր մարմինը նուազ կարեւոր է, քան հոգեւորը. ասոր համար ալ նախ շնչաւորը կու գայ եւ յետոյ հոգեւորը: Առաջին մարդը երկրէն էր եւ հողեղէն, մինչ երկրորդ մարդը՝ մեր Տէրը, երկինքէն է: Ինչպէս որ էր հողեղէնը, նոյնպէս ենք բոլոր հողեղէններս. եւ ինչպէս որ է երկնաւորը՝ նոյնպէս պիտի ըլլան բոլոր երկնաւորները: Այսինքն, ինչպէս որ կը կրենք հողեղէն Ադամին պատկերը, այնպէս պիտի կրենք նաեւ երկնաւոր Ադամին պատկերը: Ըսել կ'ուզեմ, թէ, եղբայրներ, մարմինն ու արիւնը իրենց ներկայ վիճակով չեն կրնար Աստուծոյ արքայութիւնը ժառանգել. եղծանելին չի կրնար անեղծութիւնը ժառանգել: Հիմա

ձեզի ծածուկ խորհուրդ մը յայտնեմ: Բոլորս չէ՛, որ պիտի մեռնինք. բայց երբ վերջին փողը հնչէ՛՝ ամէնքս ալ յանկարծ պիտի նորոգուինք ակնթարթի մը մէջ: Որովհետեւ փողը պիտի փնչէ եւ մեռելները յարութիւն պիտի առնեն անեղծ մարմիններով, եւ մենք պիտի նորոգուինք: Որովհետեւ մեր այս եղծանելի բնութիւնը պէտք է անեղծ բնութեան փոխուի. այս մահկանացու բնութիւնը պէտք է անմահ բնութեան փոխակերպուի: Եւ երբ մեր այս եղծանելի բնութիւնը անեղծ բնութեան փոխուի, եւ այս մահկանացու բնութիւնը անմահ բնութեան փոխակերպուի, այն ատեն պիտի իրականանայ գրուած մարգարէութիւնը, որ կ'ըսէ.- *«Մահը կլանուեցաւ. յաղթանակը շահուեցաւ»*: *«Ո՛ր է, Մահ, յաղթանակդ. ո՛ր է, Մահ, քու խայթոցդ»*: (Ա. Կորնթացիներուն 15.42-54)

Այս հատուածին մէջ Պօղոս կը նշէ չորս որոշակի փոփոխութիւններ, որոնք տեղի պիտի ունենան երբ մեր բնական մարմինները փոխակերպուին:

Եղծանելիութենէն՝ անեղծութեան- Նոր մարմինը մահ կամ փտածութիւն պիտի չունենայ: Անիկա պիտի մնայ յաւիտենապէս առողջ եւ զօրաւոր: Մահը իշխանութիւն պիտի չունենայ այդ նոր մարմինին վրայ: Բարեմիտ հաւատացեալներ յաճախ կը հարցնեն. «Ինչո՞ւ Քրիստոնեաները տակաւին ախտ, հիւանդութիւն եւ մահ կ'ունենան»: Պատասխանը բարդ է. բայց մէկ բան ճիշդ է, թէ՛ մեր մարմինները տակաւին չեն փրկուած: Մինչեւ որ ստանանք մեր վերջնական փրկութիւնը, մեր մարմինները

տակաւին ենթակայ են մահուան: Սակայն ինչպէս արդէն ըսինք, մինչեւ որ ստանանք մեր վերջնական փրկութիւնը, Աստուած մեզի շնորհեց Իր Հոգիին պարգեւները, որոնք բժշկութիւններ եւ հրաշքներ կը հայթայթեն: Օրը պիտի գայ երբ Աստուած մեր աչքէն ամէն արցունք պիտի սրբէ. այլեւս ցաւ եւ տառապանք պիտի չունենանք ինչպէս կ'ունենանք հիմա:

Անարգէն՝ փառաւորի- Մեր նոր մարմինները պիտի փառաւորուին. այլեւս պիտի չանարգուին ախտի, հիւանդութեան, վերքերու եւ վատառողջութեան միջոցաւ: Այդ յարուցեալ մարմինները պիտի ըլլան շքեղ եւ պիտի գործեն իրենց առաւելագոյն կարողականութեամբ: Դանիէլ մարգարէն կանխագուշակեց, ըսելով. «Երկրագունդի հողին մէջ քնացողներէն շատեր պիտի արթնան [...] Ուշիմները երկինքի հաստատութեան ցոլքին պէս պիտի փայլին, եւ անոնք, որ արդարութեան կ'առաջնորդեն շատերը՝ աստղերուն պէս, դարձնուին դար» (Դանիէլի 12.2-3):

Տկարութենէն՝ զօրութեան- Յարուցեալ մարմինները պէտք պիտի չունենան քնանալու, հանգստանալու կամ կազդուրելու: Յոգնութիւն պիտի չգիտնանք, այլ՝ կեանքով եւ կենսունակութեամբ լեցուն պիտի ըլլանք: Նաեւ պիտի ըլլան գերբնական կարողութիւններ, որոնք ծանօթ չեն մահկանացու մարդուն: Պօղոս ըսաւ. «Բայց մենք քաղաքացիներն ենք երկինքի, ուր Տէր Յիսուս Քրիստոս կ'ապրի: Եւ մենք անձկագին կը սպասենք Իրեն, որ վերադառնայ իբրեւ

մեր Փրկիչը: Ան պիտի առնէ մեր տկար մահկանացու մարմինները եւ փոխէ զանոնք փառաւոր մարմիններու, ինչպէս Իրենինն է՝ գործածելով այն նոյն զօրութիւնը, որով Ան ամէն բան Իր հակակշիռին տակ պիտի բերէ» (Փիլիպպեցիներուն 3.20-21⁵³):

Շնչաւորէն՝ հոգեւորի- Այդ նոր մարմինին նիւթը տարբեր պիտի ըլլայ մեր այս շնչաւոր մարմինէն: Անիկա ձեւակերպուած է յաւիտենականութեան համար, եւ սակայն ունի կարողութիւնը գործելու թէ՛ հոգեւոր մարզին եւ թէ՛ բնական մարզին մէջ: Իր յարութենէն ետք երկրի վրայ Յիսուսի յայտնուիլներէն կը տեսնենք, թէ այդ յարուցեալ մարմինը ձգողական ոյժին ենթակայ չէ (տե՛ս Գործերը 1: Յայտնութիւնը 11). անիկա կրնայ անցնիլ պատերու մէջէն (տե՛ս Յովհաննէսի 20.19,26), կրնաս դպչիլ անոր, շոգիի կամ «ոգի»ի պէս չէ (տե՛ս Յովհաննէսի 20.27), կրնայ շօշափելի կերակուր ուտել (տե՛ս Ղուկասի 24.41-43), եւ կրնայ թէ՛ տեսանելի եւ թէ՛ անտեսանելի ըլլալ (տե՛ս Ղուկասի 24.31):

Այս փոփոխութիւնները միայն նշոյլ մըն են մեզի համար Տիրոջ ծրագրածներէն: Մեծ ակնկալութեամբ, Պօղոս ըսաւ. «Եւ մենք՝ հաւատացեալներս եւս կը հառաչենք՝ հակառակ անոր որ Սուրբ Հոգին ունինք մեր մէջ իբրեւ նախաճաշակը ապագայի փառքին, որովհետեւ կ'ուզենք, որ մեր մարմինները արձակուին մեղքէն եւ տառապանքէն: Մենք եւս կը սպասենք անձկալից յոյսով այն օրուան երբ Աստուած մեզի պիտի տայ մեր ամբողջական

53 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

իրաւունքները՝ իբրեւ իր որդեգրեալ զաւակները, ներառեալ այն նոր մարմինները, զորս խոստացած է մեզի» (Հռոմայեցիներուն 8.23⁵⁴):

Մենք ներքնապէս կը հառաչենք՝ սպասելով այդ վերջնական փրկութեան՝ յարութեան: Պօղոս շատ աղուոր ձեւով բացատրեց այդ կարօտը կամ փափաքը երբ ըսաւ. «Մինչ կ'ապրինք այս հողեղէն մարմիններուն մէջ, կը հառաչենք եւ կ'ողբանք, բայց ոչ թէ անոր համար, որ կ'ուզենք մեռնիլ եւ ազատիլ այս մարմիններէն, զորս հագած ենք: Այլ, կ'ուզենք հագնիլ մեր նոր մարմինները, որպէսզի այս մեռնող մարմինները կլանուին կեանքով» (Բ. Կորնթացիներուն 5.4⁵⁵): Սի. էս. Լուիս եւս իր կարգին հոյակապ բացատրութիւն մը տուաւ այդ ներքին անբաւարարուածութեան մասին, ըսելով. «Եթէ ես իմ մէջս կը գտնեմ փափաք մը, զոր ոչ մէկ փորձառութիւն այս աշխարհի մէջ կրնայ յագեցնել, ամէնէն հաւանական բացատրութիւնը այն է, որ ես շինուած եմ ուրիշ աշխարհի մը համար»:

Յիսուս կը վերադառնայ եւ մեզ իր քովը պիտի առնէ: Իբրեւ հաւատացեալներ, մեզի վիճակուած է փառաւոր ապագայ մը: Արտօնէ՛, որ այդ յոյսը խարսխուի սիրտիդ մէջ:

Ուստի մէկկողմ մի՛ դնէք Տիրոջ հանդէպ այս ամուր վստահութիւնը: Յիշեցէ՛ք այն մեծ վարձատրութիւնը, զոր անիկա կը բերէ ձեզի: Ձեր ներկայի պէտքը համբերատար յարատեւումն է, որպէսզի շարունակէք Աստուծոյ Կամքը ընել: Այդ ատեն է, որ պիտի ստանաք այն բոլորը, զորս Աստուած խոստացած է: «Որովհետեւ քիչ ժամանակ

54 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

55 Նոյնը

ետք, Ան Որ Պիտի Գայ-ն պիտի գայ եւ պիտի ջապաղի: Եւ իմ արդարներս հաւատքով պիտի ապրին: Բայց բնաւ հաճոյք պիտի չստանամ երբ մէկը հեռանայ»: Բայց մենք անոնց պէս չենք, որոնք կը հեռանան Աստուծմէ՝ դէպի իրենց կործանումը երթալով: Մենք հաւատարիմներն ենք, որոնց հոգիները պիտի փրկուին: (Եբրայեցիներուն 10.35-39⁵⁶)



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ինչ են մեր փրկութեան փորձառութեան երեք հանգրուանները: Հակիրճ կերպով բացատրէ իւրաքանչիւրը:
2. Ինչ են այն չորս որոշակի փոփոխութիւնները, որոնք յարութեան ատեն պիտի պատահին մեր մարմիններուն:
3. Ինչո՞ւ յարութիւնը յոյսն է ամէն հաւատացեալի:
4. Մինչեւ ստանանք մեր վերջնական փրկութիւնը՝ մեր մարմիններուն փրկութիւնը, Աստուած ինչ տրամադրած է մեզի, որպէսզի մահուան դէմ յաղթանակ ապրինք:

56 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Յաւիտենական Դատաստան

Ուստի, քրիստոնէական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ գանք չափահասներու յարուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին՝ [...] յաւիտենական դատաստանին [...]: (Եբրայեցիներուն 6.1-2)

Ո՛րքան սոսկալի պիտի ըլլար յաւիտենականութիւն մտնել եւ անդրադառնալը, որ ամէն բան, որ կը կարծէիր, որ գիտէիր անոր մասին՝ սխալ էր: Ֆիլմերը եւ լրատուամիջոցները մեր միտքերը լեցուցած են այն սխալ գաղափարով, թէ՛ երկինքի մէջ պարզապէս կան մանուկ հրեշտակներ, որոնք ծփացող ամպերու վրայ նստած ջութակ կը նուագեն: Մեզմէ ոմանք շատ չեն մտածած յաւիտենականութեան մասին, եզրակացնելով, թէ չկայ կեանք մահէն ետք: Տակաւին ասելի մտահոգիչ է այն սխալ համոզումը, թէ՛ բոլոր ճամբաները երկինք կը տանին:

Այդ սխալ համոզումները՝ երկինքի մասին շարք մը ուրիշ անճիշդ տեսակէտներու կողքին, հեռու են ճշմարտութենէն: Աստուածաշունչը շատ ըսելիք ունի

երկինքի, յալիտենականութեան եւ դատաստանի մասին: Սուրբ Գիրքերուն համաձայն, կան երկու գլխաւոր դատաստաններ, որոնք տեղի պիտի ունենան: Այդ դատաստաններէն իւրաքանչիւրը յատկանշող գործօնը այն աթոռն է, որուն վրայ պիտի նստի Դատաւորը:

Այդ երկու դատաստանի աթոռներն են.

Մեծ Ճերմակ Գահը- Անոնք, որոնք հոս պիտի դատուին՝ պիտի ըլլան այն մնացեալ մեռելները, որոնք յարութիւն պիտի առնեն հազարամեակի վերջաւորութեան: Ասոնք անոնք են, որոնք չընդունեցին Աստուծոյ փրկութիւնը եւ հետեաբար չբարձրացան Յիսուսի հետ երբ վերադարձաւ Իր Եկեղեցին Իր քովը առնելու համար:

Քրիստոսի Ատեանը- Հոս է, որ Քրիստոսի հետեւորդները եւ ծառաները պիտի դատուին՝ ոչ թէ դատապարտուելու համար, այլ՝ վարձատրուելու:

Հաւատացեալներուն դատաստանը հասկնալու համար, եկէք նայինք, թէ Պօղոս ի՞նչ գրեց այդ օրուան մասին.

Ուստի, այս մարմինին մէջ մնանք թէ հեռանանք, մեր միակ ձգտումն է՝ Աստուծոյ հաճելի ըլլալ: Որովհետեւ բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որպէսզի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն: (Բ. Կորնթացիներուն 5.9-10)

Բազմաթիւ Քրիստոնեաներ գիտակից չեն,

որ հաշիւ պիտի տան իրենց կեանքին համար: Հաւատացեալները պիտի դատուին: Որոշումներ պիտի տրուին: Շատ մը Քրիստոնեաներ կը հաւատան, թէ ապագայի ամէն դատաստան ջնջուած է իրենց փրկութեամբ: Իրապէս Յիսուսի արիւնը կը մաքրէ մեզ այն մեղքերէն, որոնք պատճառ պիտի ըլլային, որ թագաւորութիւն չմտնենք. սակայն անիկա մեզ զերծ չի պահեր այն դատաստանէն թէ՛ ինչպէս վարուեցանք իբրեւ հաւատացեալներ. լաւ կամ վատ:

Երբ նկատի առնենք հաւատացեալին դատաստանը, պէտք է հասկնանք, թէ անիկա ինչով կը տարբերի անհաւատին դատաստանէն: Հաւատացեալին դատաստանը տեղի պիտի ունենայ Մեծ Ճերմակ Գահի Դատաստանէն շատ ատելի առաջ: Անոր ժամանակը չէ յստակացուած Աստուածաշունչին մէջ: Սակայն գիտենք, որ անիկա տեղի պիտի ունենայ եկեղեցիին ամպերու վրայ երկինք յափշտակուելէն ետք (կարդա՛ Ա. Թեսաղոնիկեցիներուն 4.13-18) եւ նախքան որ Քրիստոսի հազար տարուան թագաւորութիւնը սկսի: Ուստի շուրջ հազար տարուան բացութիւն մը կայ երկու գլխաւոր դատաստաններուն միջեւ:

Քրիստոսի Ատեանը բառացիօրէն Աստուծոյ աստուածային դատարանն է: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Հայրը ամէն դատաստանի իշխանութիւնը յանձնած է Որդիին (տես Յովհաննէսի 5.22): Յիսուս Քրիստոս ոչ միայն մեր Փրկիչն է, այլեւ մեր Դատաւորը, եւ շուտով պիտի դատէ Իր ընտանիքը կամ Իրենները: Դատաստանի համար բնագիրին մէջ գործածուած բառը ամէնէն պարզ կերպով կրնանք սահմանել իբրեւ՝ *քննութենէ մը յառաջ եկած որոշում մը. ի նպաստ անձին կամ անոր դէմ:*

Հաւատացեալին պարագային, անտարանին նկատմամբ մեր առած կեցուածքը կ'որոշէ, թէ *նոր* պիտի անցընենք յափտենականութիւնը. երկինքի մէջ կամ դժոխքը: Բայց իբրեւ հաւատացեալ մեր ապրած ձեւը կ'որոշէ, թէ *ինչպէս* պիտի անցընենք յափտենականութիւնը: Այդ դատաստանին շուրջ որեւէ շփոթ փարատելու համար, եկէք հակիրճ կերպով նկատի առնենք կարգ մը հանգամանքներ հաւատացեալին դատաստանին հետ կապուած:

Դատապարտութիւն պիտի չըլլայ: Քրիստոսի հետեւող ճշմարիտ հաւատացեալները բնաւ պիտի չդիմագրուեն դատաստան մը, որուն արդիւնքը վերջնական դատապարտութիւն է: Իրականութեան մէջ Քրիստոսի հետեւող ճշմարիտ հաւատացեալը պէտք պիտի չունենայ դատուելու իր գործած մեղքերուն համար, որովհետեւ Յիսուս արդէն վճարած է գինը իրեն համար:

Եթէ այդպէս է, կը նշանակէ, թէ անոնք, որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: (Հռոմայեցիներուն 8.1)

Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար: (Յովհաննէսի 3.18)

Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն: (Ա.Յովհաննէսի 1.9)

Յափտենական վարձատրութիւններ կամ կորուստներ պիտի ըլլան: Աստուածաշունչը կը յայտնէ, թէ հաւատացեալներուն տրուելիք յափտենական վարձատրութիւնները եւ դիրքերը ոչ միայն ամէն մէկուն համար տարբեր պիտի ըլլան, այլեւ շատ այլազան պիտի ըլլան. ամէն բանի կորսուիլը եւ այրիլը տեսնելէն մինչեւ ամբողջ յափտենականութեան ընթացքին Քրիստոսի կողքին իշխելը: Այդ պատճառով Յովհաննէս առաքեալ կը յորդորէ.

Նայեցէք, որ չկորսնցնէք ինչ որ ծանր աշխատանքով շահեցաք, այլ՝ ձեր վարձատրութիւնը լման ստանաք: (Բ. Յովհաննէսի 8)

Դարձեալ վարձատրութիւնները պիտի տարբերին. ոմանք պիտի ստանան ամբողջական վարձատրութիւն, ուրիշներ՝ մասնակի, իսկ տակաւին ուրիշներ՝ ոչ մէկ վարձատրութիւն: Շատերս կը ցնցուինք երբ լսենք «կորսուիլ» եւ «այրիլ» բառերը մեր կեանքերուն վերաբերեալ: Դժուար հաւատալի կը գտնենք, որ այդպիսի բան մը կրնայ պատահիլ երկինքի մէջ: Դարձեալ, ատոր պատճառը երկինքի եւ յափտենականութեան մասին մեր ունեցած սխալ համոզումներն են: Սակայն ատիկա Աստուածաշունչին մէջ շատ յստակ կը դարձուի: Պօղոս գրեց.

Որովհետեւ մենք պարզապէս Աստուծոյ գործակիցներն ենք. դուք Աստուծոյ անդաստանն էք եւ Աստուծոյ շինութիւնը, եւ ո՛չ թէ մերը: Աստուծոյ ինձի տուած շնորհքին համաձայն, ես՝ որպէս փորձառու ճարտարապետ, հաւատքին հիմը դրի. բայց

ուրիշն է, որ անոր վրայ պիտի շինէ: Ամէն ոք զգոյշ պէտք է ըլլայ, սակայն, թէ ինչպէս կը շինէ: Որովհետեւ ոեւէ մէկը չի կրնար ուրիշ հիմ դնել, քան Աստուծոյ դրած միակ հիմը, որ Յիսուս Քրիստոս է: Այդ հիմին վրայ շինուածը կրնայ *ոսկի*, արծաթ կամ թանկագին քար ըլլալ, եւ կամ կրնայ փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ: Իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատիկա կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի: Եթէ մէկուն շինածը կրակին դիմանայ՝ ենթական պիտի վարձատրուի. իսկ եթէ այրի՝ ենթական պիտի տուժէ, այսինքն թէեւ անձը ինք պիտի փրկուի, սակայն իր գործերուն համար վարձատրութիւն պիտի չստանայ: (Ա. Կորնթացիներուն 3.9-15, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Վերադառնալով շէնքի մասին մեր նմանութեան, մենք կ'որոշենք ինչպէս կերտենք մեր կեանքերը, եւ երկու ընտրութիւն ունինք. կրնանք հակի ժամանակաւորին՝ անոր որ կը հանդարտեցնէ մեր ինկած բնութիւնը (փայտ, խոտ, եղէգ), կամ կրնանք ապրիլ մեր վերստին ծնած հոգիին փափաքներուն համաձայն՝ հետեւելով Աստուծոյ յաւիտենական Խօսքին (ոսկի, արծաթ, թանկագին քարեր): Ինչպէս կ'ընտրենք կերտել կամ ապրիլ մեր կեանքերը՝ պիտի որոշէ, թէ ինչ պիտի պատահի երբ Աստուծոյ ներկայութեան կրակը քննէ մեր գործը: Ոչ միայն մեր գործերը պիտի քննուին, մեր միտքերը, շարժառիթները եւ մտադրութիւնները եւս պիտի բացայայտուին:

Այն գլխաւոր մարզերը, զորս Յիսուս պիտի քննէ՝ հետեւեալներն են.

Կոչումդ իրագործեցիր: Ամէն մարդ ունի աստուածային կոչում մը: Բոլորս ալ կարելոր դերեր ունինք Աստուծոյ թագաւորութիւնը յառաջ տանելու մէջ: Քրիստոսի Ատեանին դիմաց հաշիւ պիտի տանք այն նպատակին, կոչումին եւ պարգեւներուն համար, զորս Աստուած վստահած է մեզի: Պօղոս գրեց. «Որովհետեւ Աստուծոյ պարգեւները եւ անոր կոչումը երբեք կարելի չէ յետս կոչել» (Հռոմայեցիներուն 11.29⁵⁷): Կարելոր է, որ գիտնանք, թէ՛ ինչ կը վերաբերի մեր կոչումին, պիտի չդատուինք մեր ըրածներուն համաձայն, այլ՝ անոր համաձայն թէ ինչ ընելու կանչուած էինք: Ոմանք, որ ծառայութեան կանչուած են՝ շուկային մէջ կ'աշխատին: Ուրիշներ, որ ծառայութեան մէջ են՝ կանչուած են շուկային մէջ աշխատելու, զաւակ մեծցնելու, կառավարութեան մէջ գործելու կամ կրթական մարզին մէջ գործելու, եւ ցանկը տակաւին շատ երկար է: Ինչ կը վերաբերի մեր կոչումին, բոլորս ալ հաշուետու ենք Աստուծոյ: Յայտնաբերէ՛ կոչումդ եւ ապա ապրէ՛ զանհկա ամբողջական ձեւով:

Ինչպէս տնտեսեցիր քեզի վստահուածը: Յիսուս տնտեսելու գաղափարը բացատրեց Տաղանդներու առակին միջոցաւ, ուր երկինքի թագաւորութիւնը նմանցուց հեռու երկիր մը ճամբորդող մարդու մը (որ կը խորհրդանշէ Յիսուսը), որ իր տաղանդները իր ծառաներուն կը ձգէ, որպէսզի շահարկեն: Մէկուն կու տայ հինգ տաղանդ, միւսին՝ երկու, իսկ միւսին՝ մէկ:

57 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Երբ կը վերադառնայ իր ճամբորդութենէն, իրեն կը կանչէ ծառաները եւ հաշիւ կը պահանջէ այն տաղանդներուն համար, զորս վստահած էր իրենց: Առաջին երկուքը բազմապատկած էին իրենց տաղանդները եւ վարձատրուեցան, մինչ վերջինը հողին տակ թաղած էր իր տաղանդը եւ կորուստ կրեց: Տէրը գոհ չէր անկէ (կարդա՛ մատթէոսի 25.14-29): Բոլոր հաւատացեալները նոյն մակարդակի պարգեւներ կամ կոչում չեն ստանար: Այլ՝ իրաքանչիւրս Տիրոջմէ կը ստանանք որոշ չափ մը՝ տնտեսելու համար: Ամէն մարդ հաշիւ պիտի տայ իրեն տրուած չափին համաձայն: Աստուած կանչած է քեզ, որ բազմապատկես քու ձեռքերուդ մէջ Իր դրածը: Ինչ պիտի տաս կամ փոխադարձես իրեն երբ վերադառնայ:

Ինչ անձնական ազդեցութիւն ունեցար ուրիշներու վրայ: Մենք հաշիւ պիտի տանք ուրիշներու նկատմամբ մեր վարմունքին համար: Մեր շուրջիներուն նկատմամբ մեր բարի արարքները կրնան խորունկ ազդեցութիւն ունենալ մեզի համար դիզուած յաւիտենական վարձատրութիւններուն առումով: Մեր ուրիշներուն հանդէպ վարմունքը ուղղակիօրէն կապուած է անոր հետ, թէ ինչպէս կը տեսնենք զիրենք. ինչպէս կը վարուինք ընտանիքի անդամներու, դրացիներու, աշխատակիցներու հետ ինչպէս նաեւ ճաշարանի մէջ սպասարկողներու, շէնքի պահակներու եւ ծառայութեան մարզին մէջ եղող ուրիշներու հետ: Անոնց հետ մեր վարմունքէն զատ, մեծագոյն ազդեցութիւնը, որ կրնանք անհատի մը վրայ ունենալ՝ զայն Յիսուսի առաջնորդելն է. «Ան,

որ իմաստուն է՝ մարդոց կեանքերը կը բռնէ (կը գրաւէ) [Աստուծոյ համար, իբրեւ մարդոց որսորդ մը. ան կը հաւաքէ եւ կ'ընդունի զանոնք յափտենականութեան մէջ]» (Առակներու 11.30⁵⁸):

ՎԱՋԷՔ ՔՈՒ ՄՐՅՈՒՄԴ

Եթէ այնպէս ըլլար, որ մէկ օր ունենայիր ապրելու՝ որպէսզի որոշուէր, թէ ո՛ր եւ ինչպէս պիտի անցընէիր յառաջիկայ միլիոն տարին, ատիկա պիտի փոխէր այդ մէկ օրուան ընթացքին ապրելու ձեւը: Վստահ եմ, որ այդ օրուան ընթացքին ամէն ինչ որ պիտի ընէիր դիտումնաւոր կերպով պիտի ընէիր:

Ատիկա կը նմանի այն առիթին, զոր մենք՝ հաւատացեալներս ունինք՝ երկրի վրայ մեր ժամանակը առաւելագոյն չափով եւ լաւագոյն ձեւով գործածելու համար:

Ինչպէս աւազը աւազի ժամացոյցին մէջ, մեր օրերն ալ այդպէս կը սահին-կ'երթան: Ամէն տարի, ամիս, շաբաթ, օր եւ ժամ կարելոր են: Յափտենականութեան հետ բաղդատաբար՝ կեանքը կարճ է: Մովսէս հասկցած էր, որ երկրի վրայ մեր ապրած ձեւը պիտի արձագանգուի ամբողջ յափտենականութեան ընթացքին. հետեւաբար ան աղօթեց, ըսելով. «Սորվեցնիր մեզի, որ լաւագոյն ձեւով գործածենք մեր ժամանակը [...] եւ մեր ջանքերը յաջողցուր: Այո, մեր ջանքերը յաջողցուր» (Սաղմոսներու 30.12,17⁵⁹):

Եթէ յափտենական տեսակէտով ապրինք,

58 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

59 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

առաւելագոյն չափով աշխատանք պիտի տանինք եւ լաւագոյն ձեւով պիտի գործածենք մեր ժամանակը: Մեր որոշումները տարբեր պիտի ըլլան եւ պիտի հանդուրժենք բաներ, զորս անպայմանօրէն պիտի չուզէինք հանդուրժել եթէ յաւիտենական տեսակէտ չունենայինք:

Պօղոս առաքեալ հասկցաւ երկրի վրայ մեր ժամանակը լաւ կերպով տնտեսելու կարելորութիւնը: Մինչ ան կը մօտենար իր կեանքի վերջին օրերուն, ան ըսաւ. «Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինծի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինծի պիտի տայ դատաստանի օրը: Եւ պիտի տայ ո՛չ միայն ինծի, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք սիրով կը սպասեն Տիրոջ յայտնուելուն» (Բ. Տիմոթէոսի 4.7-8):

Երկրի վրայ քու ապրած կեանքդ կարելորութիւն ունի: Աչքերդ պահէ՛ մրցանակին վրայ. մղէ՛ պատերազմդ, աւարտէ՛ ընթացքդ եւ պահէ՛ հաւատքդ: Այնպէս ըրէ, որ կեանքդ արժէք ունենայ ոչ միայն հիմակուան համար, այլեւ յաւիտենականութեան:



ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Լեցուր պարապ տեղերը:
2. Խաչին նկատմամբ մեր կեցուածքը պիտի որոշէ, թէ _____ պիտի անցընենք յաւիտենականութիւնը: Սակայն

իբրեւ հաւատացեալ մեր ապրած ձեր պիտի որոշէ, թէ _____ պիտի անցընենք յաւիտենականութիւնը:

3. Ի՞նչ է տարբերութիւնը Մեծ Ճերմակ Գահի դատաստանին եւ Քրիստոսի Ատեանի դատաստանին միջեւ:

4. Յաւիտենականութիւնը նկատի առնելով, երկրի վրայ մեր ժամանակը ինչո՞ւ կարելի է: Թու՛ք այն մարզերը, որոնց մէջ հաւատացեալը պիտի դատուի:

5. Յաւիտենականութեան տեսակէտով ապրիլը ի՞նչպէս կը փոխէ երկրի վրայ ապրելու ձեւը:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ ՄԸ ՃՈՆԷՆ

Շնորհաւորութիւններս: Բարի եկար Աստուծոյ ընտանիքէն ներս: Դուն սկսար կեանքիդ ամէնէն նշանակալից ճամբորդութեան: Ասիկա տակաւին միայն սկիզբն է: Եբրայեցիներուն նամակը գրողը մեզ կը քաջալերէ, ըսելով.

Ուստի եկէք անցնինք Քրիստոսի (Մեսիայի) ուսուցումներուն եւ վարդապետութեան սկսնական հանգրուանէն՝ հաստատօրէն յառաջանալով դէպի այն ամբողջականութեան եւ կատարելութեան, զորս կը պատկանին հոգեւոր հասունութեան: (Եբրայեցիներուն 6.1⁶⁰)

Դուն Աստուծոյ զաւակ մըն ես, եւ ոեւէ բարի հօր մը պէս, Աստուած կ'ուզէ, որ դուն աճիս: Այն պահուն, որ վերստին ծնունդ կը ստանաս, հոգեւոր աճման գործընթաց մը կը սկսի: Կը խնդրեմ, որ հասկնաս, որ հոգեւոր հասունութիւնը հասնելիք տեղ մը չէ, այլ՝ զարգացման աստիճանական եւ յառաջդիմական գործընթաց մը: Պօղոս առաքեալ կը վստահեցնէ, ըսելով. «Ես ամբողջովին համոզուած եմ, որ Ան, որ այս փառաւոր գործը

60 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփոյիֆայտ Պայպըլ*, Քլասիք Էփիշոն (AMPC) տարբերակէն

սկսաւ ձեր մէջ հաւատարմօրէն պիտի շարունակէ հասունութեանդ գործընթացը եւ պիտի շարունակէ Իր վերջնական զարդարանքները ընել քու մէջդ մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնուիլը» (Փիլիպպեցիներուն 1.6⁶¹): Մինչեւ Յիսուսի վերադարձը քու մէջդ տեղի ունեցող աշխատանքը ընթացքի մէջ է:

Երբ անձ մը վերստին ծնունդ կը ստանայ, անոր մէջ յառաջ եկած նոր հոգեւոր բնութիւնը անմիջապէս հոգեւոր սնունդ կը պահանջէ՝ աճման համար: Աստուծոյ Խօսքը կը հայթայթէ այն անհրաժեշտ սնունդը, որուն պէտք ունի մեր անձը եւ զոր կը փափաքի:

Հոգեւոր աճը ինքնաբերաբար եղող բան մը չէ. անհկա կը պահանջէ դիտումնաւորութիւն՝ աճելու եւ զարգանալու: Կը քաջալերեմ քեզ, որ խանդավառիչ լուրդ բաժնեկցիս ուրիշ հաւատացեալի մը հետ: Նաեւ կարեւոր է, որ միանաս Աստուածաշունչին հաւատացող տեղական եկեղեցիի մը եւ կապուիս ուրիշներու հետ, որոնք կրնան քաջալերել քեզ նոր հաւատքիդ մէջ:

Անկեղծօրէն,

Ճոն Պըվիր

Յ.Գ.- Մենք կ'ուզենք աւելի եւս զինել քեզ: Առցանց ձրի աղբիւրներու համար, կրնաք այցելել **www.MessengerX.com**:

61 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Փաշըն Թրանսլէյշըն* (TPT) տարբերակէն

ՍԱՏԱՆԱՅԻՆ ԽԱՅԾԸ

Ապրիլ Վիրաւորանքի Մահացու Թակարդէն Ազատ



«Սատանային Խայծը» գիրքը կը բացայայտէ ամենախաբէական ծուղակներէն մէկը՝ վիրաւորանքը, զոր թշնամին կ'օգտագործէ՝ հաւատացեալները Աստուծոյ կամքէն հեռացնելու համար: Շատեր այդ ծուղակին մէջ ինկած են եւ նոյնիսկ չեն անդրադառնար անոր:

Մի խաբուիք: Քրիստոս ըսաւ. «Անկարելի է, որ գայթակղութիւններ չգան» (Ղուկասի 17.1): Դուք չէք որոշեր՝ ձեզ պիտի վիրաւորեն թէ՛ ոչ, բայց դուք կ'որոշէք ինչպէս պիտի պատասխանէք: Եթէ վիրաւորանքին դէմ ճիշդ ձեռով վարուիք, աւելի պիտի զօրանաք, փոխանակ դառնանաք: Միայն ճիշդ ձեռով պատասխանելը ձեզի պիտի տայ հնարաւորութիւնը անարգելք հաղորդակցութիւն ունենալու Աստուծոյ հետ:

Այս պատգամին միջոցով ճոն Պըվիր կը զօրացնէ ձեզ, որ մնաք Աստուծոյ կամքին մէջ եւ ազատագրուիք կասկածէն եւ անվստահութենէն: Դուք կրնաք ազատիլ զոհ ըլլալու մտածելակերպէն եւ ապրիլ առանց գրգռումի եւ յուսախաբութեան բեռներուն: Մինչ Աստուծոյ հնազանդելու աւելի բարձր մակարդակ մը կը յայտնաբերէք, ձեր կեանքը առատօրէն պիտի լեցուի ներումով, հաշտութեամբ, եւ յարաճուն ուրախութեամբ:

ՊԱՏՈՒԵԼՈՒ ՎԱՐՁՔԸ

**Բացայայտեցիք Այս Մոռցուած Առաքինութեան
Զօրութիւնը**



Ոչ մէկ քրիստոնէայ կ'ուզէ զԱստուած սահմանափակել, բայց մեզմէ շատերը անգիտակցաբար կը սահմանափակենք Անոր գործունէութիւնը մեր կեանքին մէջ, որովհետեւ կ'անտեսենք կարեւոր հոգեւոր սկզբունք մը՝ Պատիւը:


Պատիւը այնպիսի հասկացողութիւն մըն է, որ մեծ մասամբ կորսուած է մեր մշակոյթին մէջ, բայց ինչպէս այս գիրքին էջերուն մէջ պիտի տեսնէք, անիկա էական է Աստուծոյ Թագաւորութիւնը կեանքի բոլոր մարզերէն ներս արծակելու համար:

«Պատուելու Վարձքը» գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պրվիր, ցոյց կու տայ, թէ ինչպէս պատուելու կոչը ընդունիլը քեզ Աստուծոյ արժէքային համակարգին համապատասխան կը դարձնէ եւ քեզ կը դնէ այնպիսի դիրքի մը մէջ, ուր կը ստանաս այն ինչ որ Աստուած ունի քեզի տալու:

Այս խորունկ աստուածաշնչական յայտնութիւնները միացնելով այդ սկզբունքները գործնականօրէն պատկերող ազդեցիկ պատմութիւններու հետ, այս գիրքը քեզի կու տայ այդ մոռցուած առաքինութեան մասին նոր հայեացք մը եւ, ամենակարեւորը, կու տայ բռն փափաք մը զանիկա գործածելու կեանքի բոլոր մարզերուն մէջ:

X MessengerX

Աշակերտութեան ճամբորդութիւն մը ամէն մարդու համար, ամենուրեք




- Անվճար, աւելի քան 125 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս աշխատածրագիր («Էփիլքէյշըն» կամ «Էփ») եւ առցանց
- Աղբիւրներ՝ նախատեսուած (ընտրուած) ձեր աճիւն համար
- Հետեւեցէք ձեր անցած նիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «**Messenger**»-ի աշակերտական նիւթերու ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, *օտիօ*-գիրքեր, կարճ *ֆիլմեր*, *վիսուո*-ուսուցումներ, Աստուածաշունչեր եւ աւելին. դիտեցէք, կարդացէք եւ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

Պուն կը կերտուի յաւիտենականութեան համար:

Աստուածաշունչը շէնքի մը փոխաբերութիւնը կը գործածէ՝ նկարագրելու համար հաւատացեալի մը կեանքին շինութիւնը: Պետք եղած հիմը ունենալու պարագային, շէնք մը կրնայ հարիւրաւոր մեթոք բարձրանալ: Հիմն է, որ կ'որոշէ կարողականութիւնը... կամ ալ անոր բացակայութիւնը:

Շէնք մը պետք եղած ձեւով կառուցանելու համար, շինողները պետք է հետեւին որոշ յատակագիծի մը՝ գծուած երկրաչափներու կողմէ, սկսեալ հիմերու հանգրուանէն: Նոյնպէս ալ Աստուած՝ Ամենավարպետ Շինարարը, որոշակի յատակագիծ մը եւ շինելու ծրագիր մը ունի մեր կեանքերուն համար, զոր կարելի է գտնել սերտելով Իր Խօսքը եւ յանձնուելով Իր Հոգիին:

Աստուծոյ Խօսքի այն հիմնական ճշմարտութիւնները, որոնց վրայ պետք է հիմնէք մեր կեանքը պարզուած են Եբրայեցիներուն դրկուած Նամակին մէջ, եւ անոնք են՝ մեռելական գործերէն ապաշխարելը, Աստուծոյ հաւատալը, մկրտուիլը, ձեռնադրութիւնը, մեռելներու յարութիւնը եւ յաւիտենական դատաստանը (տես Եբր. 6.1-2):

Ամեն հաւատացեալ պետք է արմատացած եւ հաստատուած ըլլայ այդ հիմնական ճշմարտութիւններէն իւրաքանչիւրին մէջ, որպէսզի աճի Քրիստոսի մէջ: Առանց անոնց կառուցանելը կարելի է բաղդատել ուսման մէջ յառաջանալ փորձելուն առանց Նախակրթարանին մէջ ձեռք ձգուած կարողութիւններուն, ինչպէս՝ գրելը եւ կարդալը:

Այս գիրքի ամբողջ ընթացքին ճոն Պըվիր կը խօսի այդ տարրական ճշմարտութիւններէն իւրաքանչիւրին մասին, եւ կ'օգնէ քեզի, որ հաստատ հիմ մը ոյնես: Ժամանակն է խաբարանքի մը պէս բարձրանալու եւ աճելով ըլլալու այն անձը, զոր կոչուած են ըլլալ:

Իմաստութեամբ կառուցանէ:



ՃՈՆ ՊԵՎԻՐԸ միջազգային ճանաչում վայելող քարոզիչ եւ *պետք-սելիկ* հեղինակ մըն է՝ ծանօթ Աստուծոյ Խօսքին հանդէպ իր համարձակութեամբ եւ անզիջող մօտեցումով: Ընկը եւ իր կիներ՝ Լիսան հիմնադիրներն են «Մեսենճըր Ինթըրնաշնըլ» առաքելութեան, որուն նպատակն է՝ պատրաստել անզիջող հետեւորդներ Քրիստոսի, որոնք կը փոխակերպեն մեր աշխարհը: Իր Քոլորաօնո եղած ժամանակ, ճոնը կը զբաղի իր չորս որդիներուն հետ *քարտի* խաղեր խաղալով կամ համոզելով Լիսան, որ սկսի կոլէճ խաղալ:



Կը ցանկաբ անելի: Տեսարեցէ պատկերակը:



Ձրի ներբեռնումներու եւ *վիտո* սփռումներու հետեւելու համար, այցելեցէք MessengerX.com կայքէջը:



Այս գիրքը նուէր է հեղինակէն եւ վաճառքի ենթակայ չէ: